

ՄԵԾԱՄՈՐ

Ամենայն ուրախությամբ դարձյալ կգայի Խորհրդային Միությունը, բայց անելիք շատ ունեն։ Մեր վիպասանները ֆրանսացի հրատարակիչների համար փնտրված հեղինակներ են։ Պետք է,– հրաժեշտ տալով ասաց թուրք առաջադեմ գրողը (նա հակամերիկյան թրքական շարժման գործուն մասնակիցներից է),– վերջացնեն ձեռքիս գործը և սկսեն աշխատանքը վաղուց մտածված մի գրքի վրա, որ լինելու է քսանակալան թվականներին իմ ժողովրդի վարած ազգային-ազատագրական պատերազմի մասին։

Քսան թվականներին նրա ազգային-ազատագրական բանակը Շիրակում ոչնչացրեց երկու հարյուր հազար հայ։ Միլիոնատիրոջ որդի է, ուժեղ երկրի ներկայացուցիչ է, Թուրքիայի հետամնացությունը այս արագ քսաներորդ դարում այսօր-վաղը լուծվող հարց է, երեսուներեք միլիոն են և աճում են, հիսուն միլիոն են,– ի՞նչ է ասելու այս Նեֆգատ Ուստյունը իր ազգային-ազատագրական բանակի վայրագության մասին. ասելու է «երկու հարյուր հազար զավթի՞չ ոչնչացրին», մեկ միլիոնից երկու հարյուր հազարս զինվո՞ր էինք։ Ասելու է «չենք ոչնչացրել, իրե՞նք են մեզ ոչնչացրել», ասելու է «լա՞վ ենք արել»։ Դու և քո խիղճը, Նեֆգատ Ուստյուն, դու և քո խիղճը, ուրիշ ոչ ոք քեզ ոչինչ չի կարող ասել։

Ազնիվ Օքիոփերիձեն (հորենական ազգանվամբ՝ Խաչթովմասյանը) փնտրում է հորը՝ Համազասպ, մորը՝ Արուսյակ, եղբայրներին՝ Անդրանիկ, Պռոշ, Անուշավան, Սանուկ, Հարություն, Համբարձում, Գառնուկ (Ազնիվը Գառնուկի իսկական անունը լավ չի հիշում, ընտանիքի երեխաները նրան Գառնուկ էին ասում), քույրերին՝ Արփեն, Մարիամ, Շուշան Խաչթովմասյաններին (ծնված 1895-1913 թվականներին, Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքում), հորեղբայրներին՝ Արշակ, Սարգիս, Խաչատուր, նրանց զավակներին՝ Աշոտ, Արտաշես, Արտավազդ, Հակոբ, Գալուստ, մյուս Շուշան, Գուրգեն, Սուրեն, Աղավճի, Ոսկի, Թուխմանուկ Խաչթովմասյաններին, ծնված նույն քաղաքում։ Անհետ կորել են 1915-ին։ Ազնիվին փրկել է մի լեհ սպա։ Լուրեր կան, որ Ազնիվի հարազատները կենդանի են և ապրում են Արգենտինա, Ավստրալիա կամ գուցե Ռուսաստան։ Ազնիվենց տունը վանքի տեղն էր, տան ու վանքի արանքում այգին էր, այգում ջրհոր կար։ Տեղեկություններն ուղարկել U.S.S.R. Армянская С.С.Р. Երևան, Ալավերդյան փողոց – 37, «Հայրենիքի ծայն» շաբաթաթերթի խմբագրությանը։

ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ՄԱՅՐԵՐԻՆ «ՅԵՐՈՍՈՒՅԻ ՄԱՅՐ» ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ.– «Յերոսուիի մայր» պատվավոր կոչում շնորհել և «Յերոսուիի մայր» շքանշաններ ու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի շնորհագրեր հանձնել տասը երեխա ծննդաբերած և դաստիարակած հետևյալ մայրերին.

1. Ֆրանգիզ Սուլթան կրզի ԱԲԴՈՒԼԱԵՎԱՅԻՆ – տնային տնտեսուհի, Սիւսիանի շրջանի Դաստակերտ ավան:

2. Բախչազյուլ Շկոյի ԱՐՎԲՅԱՆԻՆ – սովխոզի բանվորուհի, Արագածի շրջան:

.....

«Աշխարհի տասնչորս երկրներից, որպեսզի քննարկեն գալակտիկաներում կատարվող անկայուն երևույթներին վերաբերող մի շարք հարցեր, Երևան են ժամանել յոթամասուն խոշորագույն աստղաֆիզիկոսներ. դրանց մեջ են Լեյդենյան աստղադիտարանի վարիչ, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ պրոֆեսոր Յան Օորտը (Հոլանդիա), արտաքին գալակտիկաների ակադեմիկոս հետազոտող Բերբիջի ամուսինները, պրոֆեսորներ Յվեկին և Մինկովսկին (ԱՄՆ), միջազգային ռադիոկապի փոխնախագահ դոկտոր Լեքյոն (Ֆրանսիա), ակադեմիկոս Ջիլդովիչը (ԽՍՀՄ), պրոֆեսոր Ֆուգիմետոն (Ճապոնիա), պրոֆեսոր Ուխտելը (ԳԴՀ), պրոֆեսոր Սերսիկը (Արգենտինա) և ուրիշներ:

Գիտաժողովում բացման խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Վիկտոր Յամբարձունյանը. ողջունելով միջազգային գիտաժողովի մասնակիցներին և հյուրերին, նա նշեց խիստ կարևորությունը անկայուն երևույթների հետազոտության, որի նպատակն է լայնացնել հեռավոր գալակտիկաների կառուցվածքի և նրանց բաղադրած նյութերի դեռևս անհայտ հատկությունների գիտական պատկերացումները:

Գիտաժողովի մասնակիցները վաղը կլինեն Բյուրականի աստղադիտարանում, Մեծամորի պեղումնավայրերում, ինչպես նաև Էջմիածնում և Զվարթնոցում»:

«Հանրապետության գիտությունների ակադեմիայի հնագիտության թանգարանի արշավախմբերը ծավալուն պեղումներ են կատարում Հրազդան գետի դարավանդներում, Ծիծեռնակաբերդում, Շենգավիթում, Թեյշեբախինում, Էրեբունիում, Մեծամորում, Արմավիրում և այլուր: Ամենուրեք հայտնաբերվում են նյութական մշակույթի մեծաքանակ արժեքներ: Թանգարանն ամեն տարի ստանում է հնագիտական միջին հաշվով երեք հազար առարկա: Կավե հազարավոր ամաններ, բրոնզե իրեր, դաշույններ ու կենցաղային այլազան առարկաներ են հայտնաբերվել Արթիկտուֆի հնագույն դամբարանադաշտի պեղումներից: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հառիճ գյուղի բերդ-ամրոցը, որ վերաբերում է մեր թվագրությունից առաջ երրորդ հազարամյակին: Հիշատակության արժանի

Է Մեծամորի հեթանոսական վիթխարի մեծությամբ մեհյանի, հնագիտական հազարավոր առարկաների, մետաղաձուլական հնոցների բացահայտումը: Լճաշեն գյուղում դամբարաններից հանվել են քառանիվ կառքեր... Պեղումնավայրերում կուտակվել էին նյութական մշակույթի այնքան արժեքներ, որ գիտությունների ակադեմիայի հնագիտության թանգարանի ղեկավարությունն ստիպված էր, դրանք տեղում պահպանելու նպատակով, թանգարաններ դարձնել Դվինը, Գառնին, Էրեբունին: Մեկ-երկու տարի հետո թանգարաններ կղառնան Մեծամորը, Զառիճը, Շենգավիթը, Արմավիրը, Լճաշենը, Գլաձորը, Սյունիքը, Աղստևի հովիտը, Սևանի ջրերից ազատված տարածությունները և, շատ հավանական է, ազատվելիք տարածությունները նույնպես: Մեր գործի կարևորությունը, ես կասեի համապատմականությունը, ընդգծելու համար բերեմ թեկուզ միայն մեկ իրողություն. մեծամորյան մետաղաձուլարանների հայտնաբերումը, գիտնականների ենթադրությամբ, արդեն ուղի է նշում դեպի մեր թվագրությունից առաջ տասնյոթերորդ դարում Եգիպտոսը նվաճած հիքսոսների առեղծվածի լուծումը: Ովքե՞ր էին հիքսոսները, որտեղի՞ց էին գալիս, որտե՞ղ էին կռանել իրենց երկաթե սրերը... Հին բնակավայրերի հայտնաբերման ու պահպանման գործում մեզ աջակցում է մեր բնակչությունը, չնայած որ քիչ չեն նաև այն անհատները, ովքեր...»:

Թուխ ու ջղային մարդկանց մի ցեղ, որ իրեն հիքսոս էր կոչում, հյուսիսից Ասորիք ու Փյունիկիայով Նեղոսի հովիտ մտավ և փարավոնների տասնյոթերորդ հարստությունը մեկ բախմամբ կործանեց ոչ այն պատճառով, որ տասնյոթերորդ հարստության վերջին գահակալները հզորություն չունեին, այլ շնորհիվ այն բանի, որ նվաճողները հատում ու խոցում էին պողպատե թրերով և նրանց մարտակառքերի անիվները շուրջանակված էին երկաթով, և նրանց նժույգներն ինչպես էլ սուրային՝ նրանց մարտակառքի անիվները փուլ չէին գալիս, քանի որ շուրջանակված էին երկաթով: Հյուսիսի իրենց լեռներից նրանք իջան ձիերի երախակալները կիպ բռնած, դանդաղ, ձիերին զսպելով, մտան ասորական հարթավայր, միանգամից սլացան ու երկաթով փշրեցին բրոնզե բանակներն ու կուռքերը Ասորիքից մինչև Եթովպիա: Դարձան փարավոն ու քուրմ, սովորեցրին կրակի մոգությամբ քարից դուրս քաշել երկաթե թուրը ընդդեմ լիբիական փուխր բրոնզի, աստղակապերը զատել երկնքի աստղային խառնափնթորությունից և ապա իրենք հալվեցին, հատան շոգ երկրի բարի ալարկոտության ու կանանց տաք թախծի մեջ:

Չը՞... Յյուսիսից Ասորիք–Փյունիկիա–Եգիպտոս: Յետո չքացան: (Եվ ջրերը երկրի վրա գնալով նվազում էին: Եվ տապանը նստեց Արարատ լեռան վրա): Արարատյան հովտում երկրորդ հազարամյակի հնոցներ են բացվել: Եգիպտերենում չկար յ կիսահնչյունը. եգիպտացիները եթե գրելու լինեին Յայք՝ պիտի գրեին Յաիք: Եգիպտոս–Եղըպտոս–Ղըպտոս–ղըպտ: Յիքսոս: Յիքսոս–հիք–հէք–հայք–հայ: Մայր–մէր, հայր–հէր, ծայն–ծէն... ՕՖ, ձենդ կտրիր և մի ասա թե հայոց Տիգրան թագավորը մեծ գորավար էր:

Յերն անիծած, բայց Արարատը միշտ եղել է Արարատյան հովտում, իսկ հովիտն Ասորիքից հյուսիս է. հեթիթներն էլ հյուսիս էին, բայց այդ առեղծվածային հիքսոսները կռվել են նաև հեթիթների դեմ:

Թուխ ու ջղային մարդկանց մի ցեղ, որ իրեն հիքսոս էր կոչում, հյուսիսի Արարատ երկրում զինվեց Մեծամորի պողպատե սրով, մարտակառքի անվաճաղերը հղկեց Արեգունու կենի ծառից, որ մետաղի կարծրություն ունի... Յորնաթուխ ու եռանդուն մարդկանց մի ցեղ, որ երկաթը քարից գատում էր ֆոսֆորի մոգությամբ, իսկ ֆոսֆորը գտել էր ոչխարի ու տավարի ոսկորի մեջ և առհասարակ ոսկորի մեջ՝ լինի տավարի թե մարդու...

Թուխ ու ջղային մարդկանց մի ցեղ, որ իրեն հայ ու իր երկիրը Յայք էր կոչում, հեթիթներին ոտնատակ տալով հյուսիսից իջավ Ասորիք, սուրաց ու փշրեց երկաթով բրոնզե բանակներն ու...

Թուխ ու ջղային մարդկանց երկու ցեղ, որ իրենց հայ ու հույն էին կոչում, զինվեցին սաղավարտով, նիզակով, թրով, զրահավորվեցին իրենք և զրահապատեցին իրենց նժույզը, միացան, դարձան հայ-հույն միակուռ ասպետ, և Մարաթոնից զրնգոցով եկավ ասպետը... Արևելքից գալիս էր արտ ու արոտ տրորելով Ակչա-կոյունլու ոչխարի հոտը... Ջրնգոցով գնաց ասպետը, խփեց ու խրվեց Ակչա-կոյունլու հոտի մեջ և տառապեց ու ելնել չկարեցավ բրդի փափուկ նեղվածքից, և նրա զրահը բրդի մեջ չէր զրնգում... Եվ հովիվը մահակը թափահարեց ու քշեց նրան էլ հոտի հետ մինչև Մարաթոն ու Յերկուլեսյան սյուններ: Եվ նա մոռացել էր, որ ինքն ասպետ էր և Ակչա-կոյունլու հոտի մեջ մայում էր:

Քո բոլոր ճակատամարտերն այլևս տանուլ են տրված: Քո երկրից հաղթանակ տարած ոչ մի զորավար չի մեծարվել հաղթականարով: Ոչնչացվել են կռվողների քո փոքրիկ խմբերը լեռներում ու կիրճերում: Դու ոչ մի հաղթանակ չունես: Քո պարզած սպիտակ դրոշները թռնանու մեջ չեն խաղացրել սրտառուչ հարգանք և հաշտության քո բանազնացները խեղդվել են թաց հռհռոցի մեջ: Քո երկիր մտել են ոչ թե փաղանգների կուռ սպառնալիքով կորզելու հավասարի քո դաշինքը կամ գնելու քո մեծահոգի չեզոքությունը, այլ թափթփված խուժանի խմբերով են եկել՝ կնիկ, ճարմանդ, կարպետ, ձի խլելու, արտ հրդեհելու: Պատառուտվել են նոր գնդեր գումարելու քո ծրագրերը: Բար-ձախեղդ է արվել որևէ ելք փնտրելու քո մըտնըտուքը: Ուրկից որ գուցե հանեիր զրույցի հրեղեն թուրը՝ ճզմել են քո գանգի այդ մասը: Դու ջախջախված բանակի միավոր ես: Դու պիտի այն անես, ինչ անում են պարտված բանակները: Պարտված բանակները հաղթողների համար կանգնեցնում են իրենց պարտության հուշասյունը:

Եռանդուն մարդկանց մի ցեղ, որ իրեն հիքսոս էր կոչում, հյուսիսի Արարատ երկրում պողպատը...– Ոչ, մի պարծեցիր:

Ազնիվ Դիլբասին փնտրում է 1915-ին անհետ կորած իր Յամագասպ հորը, Արուսյակ մորը, երկու միլիոն եղբայրներին ու...– Մի նվճվա:

Մեկ-երկու տարի չանցած թանգարաններ կդառնան Մեծամորը, Յառիճը, Շենգավիթը, Սևանի ջրերից ազատված տարածությունները և, ամենայն հավանականությամբ, ազատվելիք տարածությունները նույնպես: Չէ՞ որ օտարները մեր հանրապետությունը կոչում են թանգարան բաց երկնքի տակ:– Մի հեզմիր:

– Լավ:

ա. Եվ երկրի վրա քառասուն օր ջրհեղեղ եղավ, և ջրերը շատացան ու տապանը վերցրին, և տապանը գետնից կտրվեց: բ. Եվ ջրերը զորացան ու խիստ շատացան երկրի վրա, և տապանը ջրերի երեսին տարուբերվում էր: գ. Եվ ջրերը ամբողջ երկնքի տակ ծածկեցին բոլոր գագաթները և գագաթներից բարձրացան դարձյալ

տասնհինգ կանգուն: դ. Եվ ջրերը երկրի վրա մոլեգնեցին հարյուր հիսուն օր, և կայծակը զարկվում էր ջրերին և կայծակի տակ փայլում էին միայն ջրերը: Ե. Եվ ապա գոցվեցին երկրի պղտոր ակունքները ջրերի տակ և գոցվեցին երկնքի պատուհանները նույնպես: գ. Եվ ջրերը երկրի վրա դանդաղ նվազել սկսեցին: է. Եվ յոթերորդ ամսին, յոթերորդ ամսի տասնյոթերորդ օրը, տապանը նստեց Արարատ լեռան վրա: ը. Եվ Նոյը սպասեց դարձյալ յոթ օր, և խոր գիշերվա մեջ երկիրը հանդարտ ներքաշում էր ջուրը, արծաթե հին կնիքի փայլով շողում էին արարատյան բարդիները, տազնապոտ գիշերվա գողի պես գնում էր սահմանային Արաքսը, երկնքում մի կանաչ հրթիռ կախվեց, նրա անկենդան լույսերի մեջ դեսուդեն նետվեց մի նապաստակ, եղեգնուտում սվսվաց ու ծվարեց փոքրիկ քամին:

Գնացքի էր սպասում երկաթուղին, լռում էին էջմիածնի պղնձե զանգերը, խորհում էր կավե մի կտոր պատը խաղողի պառավ որթի մոտ, լույսը ծփում էր Երևան քաղաքի վրա Արարատյան հովտով մեկ, Մեծամոր բլրի մոտ մթի տակ տնքում էին փորձնական տնտեսության գոմեշները, ջուրը փայլում էր ածուների մեջ, Արարատի ձյուններից ներքև քանդված մատուռի մոտ հովվակրակի հետ մարմրում էր ոչխարաշան ոռոնցը երկու միլիոն մեռելների ուրվականների մեջ, նիրհող հոտի վրա՝ ամուռու...

Գանգատանում էին շոգեքարշը, անավարտ քարի մոտ՝ մուրճը, մեռնում էին հին շշուկները հին իջևանատան պառավ մոխրի մոտ Անիի կանաչ ճանապարհին, խամրում էր երեկվա լրագիրը ուրախ լուրով՝ թե երկրի գերբնակեցման վտանգը չի սպառնում մեր մեծ Միությանը: Խոր գիշերվա մեջ լուռ մտածում էին գրքերը, լքված իջևանատունը Անիի հին ճանապարհի վրա, անավարտ քարը տառեր, ողկույզ ու խաչ էր խոկում, պառավում էր էրեբունի բերդի կավը, թանգարանում դանդաղ փոշիանում էր տեգը, և անհավատալի էր, թե այս երկրում երբևէ տեգ են կոփել և տեգ են բռնել,– և ճաղատ մատենագիրը կարճ պինդ մատներով տրորում էր մեծ գլուխն ու վախենում էր մոտենալ լավաշի չափ լուսավոր գրասեղանին,– գալիս է հոտը... գալիս է հոտը... գալիս է հոտը...

Գալիս է հոտը...	Փալանած եզան
Ներին առջևից,	Բութ կճղակներով
Գամփռը ետևից,	Առևանգել են
Ուղտը մի թևից,	Հունդ ու հորովել...
Թուխպը մի թևից,	Առևանգել են,
Ամեն, ամեն ինչ	Տրորել են քեզ
Խառնելով իրար՝	Քոչվոր ցեղերը
Ալեկոծվում է	Դարեր շարունակ:
Բլուրներն ի վար	
Սև հեղեղի պես...	Դարեր շարունակ
Այդպես է եղել,	Գալիս է հոտը:

Կըռ կըռ կռկռան Կռունկները հա թռան, Կռունկների թևի տակ եղավ գարուն մեր դռան: Տղմուտ գետի ափին իր ընկերների հետ հերոսի մահով զոհվեց քաջ հրամանատար Վարդան Մամիկոնյանը: Հրազդան գետը բխում է Սևանա լճից: Սևանա լիճը գտնվում է Գեղամա լեռներում: Երկու անգամ երկու՝ չորս, երկու անգամ երեք՝ վեց, երկու անգամ չորս՝ ութ, երկու անգամ հինգ՝ տասը, երկու անգամ վեց՝ տասներկու: Հեքիաթների դևերը սու-տեն...– այդպես գերազանցիկ, ցուցամատս թանաքոտ, չորս հատ դասագիրք պայուսակիս մեջ, մեծ գլուխս նեղ ուսերիս ճոճելով իբր թե գնում եմ դպրոց. մայիսյան առավոտը զնգում է իմ մաքուր թոքերի մեջ, պիոներական վզկապի զույգ ճյուղերը ծեծում են ուսերս... Երազի շարունակությունը գիտեն և չեն ուզում տեսնել. քնի մեջ ժպտալով շուռ եմ գալիս և ոչ այն է հիշում ոչ այն է տեսնում շարունակությունը. և քնի մեջ ժպտալով թե արտասվելով ես սիրում եմ ինձ, դպրոցի ճամփան, ճանապարհի շան քոթոթին, որ մի օր էլ շուն էր դարձել, ու վրա պրծավ...

Ո՞ր ես գնում եդպես արագ,
Այ դու կայտառ սիրուն գետակ,
Կանգ առ խաղանք էս ծառի տակ...
Չէ, փոքրիկս, գնամ պիտի...

Հետո թռած եկավ արեգակի շեղքը, բախվեց, սայթաքեց Արարատի սառույցների վրա և ձորն ընկավ ու փշրվեց, և Արարատյան հովիտը լցվեց կապույտ վաղորդայնով: Մի պահ սպասեց ու հազար

գործարանի ուժով պայթեց Երևան միլիոնանոց քաղաքը: Ջրհեղեղը ցամաքել էր՝ Գեղամա լեռներում թողնելով մի բուռ ջուր:

Եվ քնի մեջ ես զգում եմ մայրական գոյության հովանին ու, սրճի բուրմունքի հետ, լսում ընկերներիս ծիծաղը:

– Քնեցիր, մեծացար, մեծ տղա դարձար:

– Գնում եմք Մեծամոր, վեր կաց:

– Ասում եք Արաբստանը ժամանակին նվաճել եք, հա՞:

– Նվաճած կլինենք:

– Ո՞ւր չքացաք հետո, չե՞ք հիշում:

– Հիշում եմք. դըպտերի բանակն առանք, եկանք ջարդուխուրդ արհմը հայերիդ:

– Եկել էիք ձեր տուն, բա չէի՞ք կարոտել:

– Կարոտել էինք, լաց եղանք ու լաց լինելով ջարդեցինք:

– Հետո՞, անունն ի՞նչ դրիք:

– Անունը դրինք բյուզանդական հայ Վասիլ երկրորդ հայասպան:

Պատերազմ չկա. եղեռնը եղել է հիսուն տարի առաջ. մթնոլորտը բարի է. որդու վրա խաղաղ թևածում է մարդկային սիրո հրեշտակը. բարի գիշերից հետո՝ բարի ցերեկ – մայրական գոյությունն աննկատ, որպես հուշիկ ոգի, ինքն իրեն պահում է տան մի անկյունում՝ որդուն մինչև երեկո հանձնելով ընկերներին ու Արարատյան հովտին:

Հրազդանի կամուրջն անցել էր, Վաղարշապատի ճանապարհի տակ գանգուր ծիրանուտի միջով հեռանում էր Խաչատուր Աբովյանը՝ դեպի լյառն Մասիս: Մի մայր Քանաքեռի արևոտ այգիներից ձեն էր տալիս. Խաչեր, Խաչե՛ր: Ուսերից մեկը կախ, մյուսը բարձր՝ ծիրանուտով հեռանում էր Չարենցը: Քուրդն Արագածից ոչխար էր իջեցնում քաղաքի շուկա, ցողը ցնդում էր դեղձի վրայից, բահը թափահարելով տնտեսության ղեկավարի մեքենան հեռվի ճանապարհին կանգնեցրեց այգիների գիշերային ջրվորը: Դվինի կավե ավերակներում ջղային քնից հետո ընկերուհուն, – Հասմիհիկ, – կանչեց ծղոտե գլխարկով, այրված, պինդ, կրքոտ ու խելացի աղջիկը՝ համալսարանի հնէաբանության բաժնի ուսանողուհին: Շարժիչները հանգցրած վայրէջքի եկավ գերիզոր օդանավը, գնաց, մի թևով շե-

ղակի հատեց տապանի առասպելը Արարատի գագաթին, պտույտ տվեց ու Դվինի վրայով, Արտաշատի վրայով, Էջմիածնի գմբեթներին քսվելով գնաց գտնելու բետոնի կարծր երիզը այս ցնորական երկրի վրա:

– Ուշադրություն, ուշադրություն. Երևանի արևմտյան օդանավակայան ժամանեց հայկական առանձին օդանավախմբի 2345 ուղերթի ՍՍՍՌ-68 ինքնաթիռը: Խնդրվում է, մինչև պտուտակների լրիվ դադար, չմոտենալ ինքնաթիռին: Վնիմանիյե, վնիմանիյե. նա պասադկու պրիբըյլ... Խնդրվում է չմտնել վայրէջքի հրապարակ: Վայրէջքի հրապարակ մտնողները պատժվում են օրենքի ամենայն... Խնդրում են, մի մտեք վայրէջքի հրապարակ, արտասահմանից հյուրեր կլինեն, ամոթ է... Այ ախպեր ջան, էդ ո՞ւր ես գնում, քեզ որ մի բան պատահի, ինձ վրա են խոսելու, չէ...

Ջրվորն ընդառաջ գնաց տնտեսության ղեկավարին, ետ եկան, տարավ ցույց տվեց պառավ որթերի արանքը, գետինը:

– Էս է: Գտել են: Այսինքն՝ ես չեմ գտել, ջուրը բացեց:

Կարասի մեջ դեռ վնգում էր օդանավի ծանր աղմուկը: Հողը գվվում էր, գետինը երգում էր եկեղեցու պես. ծեր որթերի արանքով պատները բարակ վիզները նեղ կարմիր կարասների շարք էր: Նրանց նախշազարդ վզներին գիտահետազոտական մի հիմնարկի չափ մանրամասն գրած էր, թե նրանք Սինուայի որդի Արգիշտիի (Արգիշտի էլ անո՞ւն լինի)... Արգիշտիի կարասներն են, «պարունակել են խաղողի գի... գի...», գի... գիտահետազոտական մի նոր հիմնարկ: Դե «գինի», էլի, գինի, կարասն ի՞նչ պիտի պարունակեր՝ գինի: «Ի փառս...», և շատ պարզ, մաքուր հայերեն գրած էր, թե այդ այգին թանգարան ու թանգարանի հրապարակ է դառնալու, տնտեսության այդ ղեկավարը՝ թանգարանի վարիչ և այդ ջրվորը դառնալու է Արգիշտիի կնոջ արծաթե հայելու պահակ:

– Թո՛ւ...– կարասների մոտ նստեց տնտեսության ղեկավարը:– Արա, ես քեզ ծառ ջրելու են դրկե՞լ թե կարաս գտնելու: Լսիր,– ասաց տնտեսության ղեկավարը,– արի քեզ մի տասը տարով ուղարկենք Մեքսիկա, էնտեղից համ խաղողի նոր տեսակ կբերես, համ աշխարհ կտեսնես, համ էլ բերանդ սրա-նրա մոտ չես բացի՝ թե

այգում թանգարան ես գտել...

Ախպեր, Վաղարշապատի վանքը կար, չէ՞: Վանքը այգի չի, ով եղ-
քանը հասկանում է՝ ապրի: Վանքի տակը փորեցին՝ հասան նախա-
քրիստոնեական մեհյանին: Մեհյանի տակն էլ թող փորեն՝ իջնեն նա-
խահեթանոսական քրիստոնեություն: Դրա տակն էլ թող փորեն՝
հասնեն դարձյալ մեհյանի: Իրենց ինչ է եղել, բահ ու քլունգ էլ ունեն,
գիտնական էլ են: Բա իմ խաղողի վազը ես ո՞նց տանեն տնկեն մեհ-
յանի տակի խորանի տակ:

– Գիշերը ես եմ ջրվոր եղել,– ասաց տնտեսության ղեկավարը,–
իսկ դու եղել ես քո տանը քնած: Կարասները երազում ես տեսել,
երազդ էլ լավ չես հիշում: Հիմա բահդ թող ու գնա:

Արմավիր գյուղի դպրոցական տղաներն ահա պիտի հնծիչ բա-
նեցնեին, լուիկ հավաքեին, ջրանցք քաշեին... պեղելով կավից զա-
տում են օրական մի ուլունք, ջնարակած մի կտոր ափսե, երբեմն՝
կոպիտ մի արծաթադրամ, կավե մի սալ՝ օրը երկու ռուբլի հիսուն
կոպեկ փողով և դպրոցում Հայոց պատմությունից ստանում են ան-
բավարար: Հիմա կավե ավերակներում նստոտել են և ալարկոտ
թախիծով ամաչում են նայել ուսանողուհու բրոնզագույն ոտքերին և
սիրահարվում են լաց լինելու չափ: Ինչի համար են այս պեղում-
ները, ինչո՞ւ ամուսնանում են քսան տարեկանից հետո, ինչո՞ւ
տասը տարեկան աղջիկը մարդու չի տխրեցնում, իսկ մեծ աղջիկ-
ները տխրեցնում են, հաց ուտելիս ինչո՞ւ դասախոսի և մյուս տղա-
ների ծամելը տգեղ է, իսկ աղջկա ծամելը՝ տխուր ու գեղեցիկ: Այդ-
պես կոդակ, թուխ ուտերը լայն, տաբատը քշտած, կրունկները պինդ՝
նրանցից մեկն ահա ոստմեց ու չոր գետինը կրունկա հարեց
արագացող վազքով դեպի Վաղարշապատ վեր-
ջին Արշակունի Վռամշապուհարքայի մոտ թե
վարդապետը... դապետը գրերը բերում է...

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
Ժ Ի Լ Խ Ծ Կ Յ Ձ Ղ
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ
Ռ Ս Վ Տ Ր Ց Ժ Փ Ք

- Ապա, ապա,- սպասեց Վռամշապուհը:
- Էս է:- Մնացածը:- Լրի՛վ է:- Լրի՞վ:- Էս է:- Է՛, ուրեմն չկարողացար:- Կարողացա: Եղածն էս է:- Էս ի՞նչ է:- Ա, Արարատ:
- Է՛, չեղավ, չեղավ: Արարատը բա է՞սպես կլինի: Հապա գրիր Արարատ:
- ԱՐԱՐԱՏ:
- Է՛,- խռովեց Վռամշապուհը,- մարդ աստծու, աստծու տարին քեզ ենք սպասում՝ վարդապետը գիր է գտնում, գիր է գտնում, գտածո ո՞ւր է: Հապա գրիր ծիրան:
- ԾԻՐԱՆ:
- Ով գիտի, գուցե եղ է: Սա ո՞վ է:
- Գ-ն է, չե՞ս ճանաչում:
- Նման է, ինքն է:- Վռամշապուհը փառ-փառ ծիծաղեց Փ տառի վրա.- Էս Փ չի՞:
- Ե՛ ԿՍՍԱՆ ՍՈՐՍՈՐԵԼ ԳՆԱԼ Ի ԲԱՆԱԿԷՆ ՀԱՅՈՑ, ԹՈՂԻՆ ՋԻԻՐԵԱՆՑ ԱՐՔԱՅՆ ԱՐՇԱԿ...
- Ի՞նչ գրեցիր:
- Նախարարները լքեցին իրենց Արշակ արքային և երես դարձըրին մեր հայ ժողովրդից:
- Հիմա լրի՞վ է,- ասաց Վռամշապուհը:
- Լրիվ: Ամբողջը:
- Ապա մի գրիր քո անունը:
- ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇՏՈՑ:
- Լավ գիր է,- տխրեց Վռամշապուհը,- գեղեցիկ, էսպես ինքն իր համար: Ոչ ոքի ոչինչ չի հրամայում: Մեզանից ուրիշի ոչ մի պարտադրանք չի տանում: Ինքն իր համար կա ներամփոփ, խոհուն և իր խորին եզրահանգումն ինքն իր մեջ մեռցնող: Սա Հայոց գիրն է և միայն Հայոց գիրն է: Մեր մասին ու մեզ համար ճիշտ գիր է:
- Տղաների նույն խումբը՝ մեջքները մերկ, տաբատները քշտած ծնկներից վեր, Մեծամորի ջրերով լուռ շարժվում էր դեպի ակունք. երկու ափերով նրանց ուղեկցում էր եղբայրիկների խումբը. ապա տղաները մի պահ թալտում էին ջրի մեջ և ափ ձուկ էին նետում: Ուռի շիվերին սևամեջք ձկներ էին հագցրած: Գետի ջրերի մեջ

տղաների խումբը կանգնեց ու լուռ նայեց, մանուկների խումբը նույնպես նայեց ու թարթեց աչքերը,—

Մաշտոց վարդապետի գալստյան ճանապարհը հատելով, տառապանոք դնելով շղթայակապ բոբիկ ոտների ամեն քայլը, էս լույս աշխարհի դեմ աչքերը ածխակոթով բրած, ձեռնաշղթաների ծանրությունից կուզ՝ Ատրպատականի ձիավոր սատրապ Վարազ-Շապուհի առջև դեպի Ներսեհ Սասանի ողորմածությունն ու զայրույթն էր գնում Հայոց արքա — Հայոց արքա — Տիրան թագավորը,

քանի որ «այն ժամանակ Տիրան թագավորը մի ձի ուներ, ձին մուգ-շագանակի ու պուտպուտուրիկ էր», որ ուզեց ունենալ Պարսից Ատրպատականի բղեշխ Վարազ-Շապուհը, բայց Հայոց Տիրանը որոնեց և գտավ նույն տեսքի ու նույն նշանի պուտպուտուրիկ մի ուրիշ ձի և հրովարտակով բղեշխին ընծայեց՝ որպես թե այդ էր նրա ցանկացածը: Այո: Ինքը, ճշմարիտ, հենց այդ մտույզն էր ուզել, և Վարազ-Շապուհը շատ ուրախացավ, և շնորհակալ էր մեծապես, և Տիրանի համար որս, խնջույք ու պատիվ սարքեց, հիացավ նրա նետի սլացքով և շղթա զարկեց նրա ձեռուտին, կրակով բրեց նրա աչքերն ու քշեց դեպի Ներսեհ Սասանի կարմիր կոշիկները: Բակտրիայից Պաղեստին և Եմենից Կուլք երկրների առաջին տերը Տիրանին ետ Վաղարշապատ նետեց,— Դե գնա մտածիր աշխարհի բանը,— ի խրատ արարատյան Արշակ ու ապագա կառավարիչների, հանուն իր Սասան որդիների ու ծոռների տիրակալական դժվար գործի:

«Նրա գերեվարության ու կուրացման մասին վկայությունները, մեծ մասամբ, վիպական-ստեղծական պատմվածքներ են և չեն կարող հավաստի ու պատմական համարվել»,— բայց այդ պատմվածքները չեն ասում թե՛ Պարսից Ներսեհը պուտպուտուրիկ մի ձի ուներ, որի վրա բոլորը զարմանում էին, և այդ ձին ուզեցավ ունենալ Հայոց Տիրանը, Ներսեհ Սասանը չուզեցավ տալ և վախեցավ չտալ, այլ գտավ դրա նման մի ուրիշ ձի... և ապա Հայոց Տիրանը քմծիծաղ տվավ ու խլեց ժլատ Սասանի ձին էլ, աչքերի լույսն էլ, թագն էլ, երկիրն էլ...

Հետո, երեխաների ու կանանց ձայները մթի մեջ մարել էին, երկի բարձրացել էին Ապարանի հովանոցները՝ շոգերն այնտեղ անցրնե-

լու, փշատեճու բույրը փակում էր ռունգները, երևի դեռ կային ու երկինքներում մի տեղ լողում էին Մեծ Մասսի սառույցները, – և կույր Տիրանը ականջ էր պահել Արարատյան հովտի լռությանը: Դժբախտություններից, անվերջ դժբախտություններից խելքները շաղած այս հայերը որդու դեմ դա՞վ շշմջացին, ե՞լք փնտրեցին որդուց թաքուն, թե՞ հեռվում սովորական բաներ էին գրուցում գահից ու երկրի գործերից հեռու մշակ մարդիկ: Մի կարճ ծղրտոց եկավ – որևէ մերկ թիկունք դաշնույն խրվեց, – և շունչը պահեց դարանակալ լռությունը: Ոչ, պատանիներն էին, լոքոյի ցուլ էին ասի նետել:

Ի՞նչ էր հարկավոր՝ որպեսզի չլիներ այնպես, ինչպես եղավ: Նախճավանի խորշակ է փչում. կխփի-կխարկի արտ ու արոտ, խորշակի ետևից սև ամպերով կգա մորեխը: Իսկ եթե ճիշտը Սասանի Ներսեհն է, քանի որ կա անդրկասպյան մեծ վտանգը և դրա դեմ այսրկասպյան մեր ընդհանուր տանը միակամություն է պե՞տք: Իսկ եթե միակամությունը վերջանա մեր խոսքի և իրավունքի և կարմիր կոշիկի և խատուտիկ ձիու կորստով և դատարկ անձի պահպանմա՞մբ: Իմ նժույզը հեծնի Վարագ-Շապուհը, քանի որ ձին լավ ձի է, ես վատն եմ ու անարժան իմ տակն այդպիսի նժույզ քաշելու: Որպեսզի՜... որպեսզի չլիներ այնպես, ինչպես եղավ, հարկավոր էր ահա թե ինչ. հարկավոր էր որ գելն ուտեր պուտպուտուրիկ այդ ձիուն: Եթե անդրկասպյան սարսափը պիտի գա ու կախվի մեր... մեր ինչի՞ վրա. թագավոր լինելու մեր իրավունքի վրա. եթե մենք հիմա թագավոր ենք՝ ինչո՞վ ենք թագավոր: Թող գան ու սրբելով անցնեն մինչև Բյուզանդիոն ու Աթենք ու Ղոն. եթե մենք չենք լինելու մենք՝ այդ չզոյությունը թող գա որպես թույն ոսկե բաժակի մեջ կամ ջորու պոչից կապելու ձևով, մեզ համար մեկ է:

– Արշա՛կ...

Երանի նրանց, ովքեր արել են մի բան ու մեռել. երանի նրանց, ովքեր մեռել են ոչինչ էլ չարած. երանի նրանց, ովքեր մեռած են արդեն ոտքի վրա: Եթե պատահի, որ Արշակը պուտպուտուրիկ մի ձի ունենա, այդ ձին խլել ուզենա Ատրպատականի սատրապը՝ թող Արշակը նվիրի: Ձիու եղածն ինչ է՝ թող տա, կորցնի աչքից: Եվ վերջապես Արշակը սեփական գլուխ ունի իր ուսերին, թող դատի այն-

պես, ինչ-պես կամենում է ինքը: Փորձով՝ հովիվները գայլերի դեմ կրակ են վառում և տալիս հովվացու իրենց որդիներին: Այս դժվար կյանքում համրի թե ովքեր որտեղ են դարան պահել, ովքեր որտեղ են ժանիքավորվում, Հայոց թագավոր լինելու ծանր գործի համար փորձ հավաքիր, հղկիր և որպես ադամանդ ափիդ մեջ՝ պարզիր որդուդ.– Առ, Արշակ:– Դե կույր-կույր, կույր-կույր ապրիր հազար տարի և խարխափելով ճանաչիր անապատի պես ոտի տակից փախչող այս երկիրը, կարո՞ղ ես:

Եւ սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին, թողին զիրեանց արքայն Արշակ: Նախ բղեաշխն Աղծնեաց, եւ Նոշիրական բղեաշխն, եւ Մահկերտանն, եւ Նիհորականն, եւ Դասընտրէինն, եւ ամենայն նախարարութիւն Աղծնեաց ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ եւ չոգան կացին առաջի արքային պարսկաց Շապիոյ. եւ զատուցին զիրեանց աշխարհն ի Հայոց: Եւ յետ սորա Գուգարաց աշխարհի բղեաշխն, եւ յետ սորա Ջորայ գաւառին տէրն, եւ Կողբայ գաւառին տէրն, եւ ընդ նոսա Գարդմանաձորոյ տէրն: Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արծախայ, եւ ամուր գաւառն Տնորեաց, եւ ամուր աշխարհն Կորդեաց. ապա եւ տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից: Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց եւ ձեռին իշխանութեանն տանն Հայոց թագաւորին, որ էր զԱտրպատական աշխարհաւն, յետս եկաց ի թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց, եւ աշխարհն Կազբից. եթող զարքայն Հայոց եւ գնաց Սաղամուտ տէր Անձտեայ, եւ ընդ մնա իշխանն Մեծի Օռփաց...

Այսինքն թե՛ հայերի Արշակ թագավորը կատաղութիւն չէր ունեցել Արցախ, Աղծնիք, Օռփք, Նիհորական, Դասըն, Անձիտ, Կորդուք, Գուգարք բազմանուն երկիրը դարձնել բռունցքի պես մի Հայք, Արշակ մարդահաճ թագավորի բազուկը դողացել էր ջարդելու, կռանելով միայն իր կամքը, բազմագլուխ երկրի կուսակալ ավելորդ գլուխները, և ահա իշխանների նախիրը իրենը կարծեց իր արածած մարգագետինը, մաճկալների ու հնձվորների բանակը, երակների արյան կորովը և արյան մեջ սաղմի պտույտը իր երակներում, կարծեց ինքը իրենն է, Արշակինը չէ, և տարավ, Շապուհին տվեց մի

զանձ, որ ոչ Արշակինն էր, ոչ էլ իրենը, այլ գալիք սերունդներինս՝ մերը: Եվ հայերի Արշակ թագավորը բաց մարտադաշտում նետատարափի տակ մնաց մերկ ու մենակ:

Ամենայն մարդիկն երկրին Հայոց ստիպեցին բռնաբռնեցին զիրեանց թագաւորն զԱրշակ եւ շտապեցին, զի յարիցէ գնասցէ յանդիման լիցի թագաւորին Պարսից Շապիոյ:

Այսինքն թե՛ հայերն իրենց Արշակ թագավորին ասացին, շատ ասացին, հորդորեցին, պահանջեցին, հուսադրեցին, խաբեցին, շտապեցրին, հրեցին դեպի Շապուհը թե՛ «մարդավարի զրույցի է կանչում, գնա տես ինչ է ասում»:

Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից բերել շղթայս եւ արկանել ի պարանոցն Արշակայ եւ յոտս եւ ի ձեռս նորա՝ երկաթս, եւ խաղացուցանել զնա յԱնդմըշն եւ պնդեալ զնա մինչեւ անդէն մեռցի: Եւ ետ հրաման թագաւորն Պարսից մորթել զգօրավարն Հայոց Վասակ եւ զմորթն հանել եւ լնուլ խոտով եւ տանել ընդ նոյն բերդն յԱնդմըշն:— Ապա պարսից Շապուհն ասաց, և շղթա զարկեցին Արշակ արքայի պարանոցին, ոտներին ու ձեռներին նույն շղթայով, վերցրին նրան և տարան, շպրտեցին Անդմըշն անպատուհան բերդ, որ անվանում են նաև Անհուշ բերդ, քանի որ հավիտյան լուռ ու խավար է: Ապա Շապուհը նշան տվեց, և մորթեցին հայոց Վասակ զօրավարին, որ հանդուգն Մամիկոնյան էր, մորթը տիկ հանեցին, խոտ խցկեցին մորթի մեջ և նետեցին խավարի մեջ դեպի Արշակը:

Այսպես անցավ Արշակը, որ բանաստեղծ մարդ էր և հույների ու պարսիկների արանքում իրեն կնքել էր Հայոց արքա Արշակ, իսկ նրա Տիրան հայրը մնաց Արարատյան լույս հովտի իր խավարը խարխափելով:

— Արշա՛կ... էդ ո՞ւր ես, է, ձե՛ն չես հանում:

Հետո հայոց պետերը պարսից Վռամին ասացին.— Ախպեր, մեզ թագավոր պետք չի, մենք թագավոր չենք ուզում. թագավոր է՛ էդ է դու թագավոր ես, բան հարցնել է՛ կգանք քեզ կհարցնենք, համ էլ քաղաք կտեսնենք, աղջիկ-մաղջիկ կպատահի, թե չէ՛ է՛ն սարերի ծեղրին...— Հայ նախարարները զգվել էին թագավոր ունենալուց և, աստծու հաջողությամբ, «Հայոց Արտաշես թագավորը սկսեց թաղ-

վել անչափ անառակ ցանկությունների մեջ այն աստիճան, որ բոլոր նախարարները նրանից զզվեցին: Նրանք եկան Սահակ Մեծ քահանայապետի մոտ, դժգոհեցին և նրան նույնպես հրավիրեցին իրենց օգնելու, որպեսզի Արտաշեսի վրա չարախոսեն պարսից արքայի առջև, իրենց թագավորին դեն գցեն և պարսիկ բերեն աշխարհին կառավարող: Իսկ Սահակ Մեծն ասաց...»:

Իսկ Սահակ Մեծ քահանայապետն ասաց.

– Եվ ինչպե՞ս կարելի է այդ իմ ախտավոր ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է:

Իսկ նախարարներն ասացին.

– Դու մեր քահանան չես:– Եվ պարսից արքային ասացին.– Ախպեր, ինչ մի պարտադիր է, որ մեր թագավորը հայ լինի: Մեզ մի պարսիկ թագավոր է պետք՝ որ վախենանք... մեր էս Արտաշը խմում է, ձի է քշում, մեր կանանց կողքը մշտում է, թագավորը բա էդպե՞ս կլինի:

– Բարի,– ասաց պարսից արքան:– Մեր Շապուհ որդին ձեզ թագավոր: Բարի:– Հայոց գործերն այսպես կարգադրեց պարսից Վռամ արքան և դեմքը շուռ տվեց Բակտրիայի գործերին:

Եվ հենց որ շուռ եկավ դեպի Բակտրիա, «քաջ և բարեբախտ Ներսես ճիճրականցին հավաքեց հայոց նախարարներին իրենց գնդերով, պարսից զորքի դեմ պատերազմ մղեցին, նրանց բանակը կոտորեցին և ապա, ցրվելով, ինքնագլուխ շրջում էին լեռներում և ամուր տեղերում՝ իրենց գլուխը պահելու համար»: Դա եղավ, ուրեմն, ՆԻԲ թվականին: Ապա մորթեցին ու մաշկեցին երկրի բոլոր արջառներն ու երինջները, ոչխարներն ու այծերը և առհասարակ վայրի բոլոր երեները և, կաշիները թրծելով տաք մոխրի մեջ արևի տակ, բլուր առ բլուր մազաղաթ արեցին. և այժի մազից պարան ոլորելով և ցից խրելով անդունդ կիրճի պռնկին, պարանով իջան վարից անմատույց վերից անմատույց քարայր՝ քննելու հունաց լեզվի քերականությունը, ճարտասանական առավելությունները և առհասարակ՝ համեմատությամբ գարգարացվոց կոկորդախոս աղխագուր խժական խեցբեկագույն լեզվի, և թե ինչքան սխալ է հրեից կարծիքը մարդաբնույթ աստծու մասին, և թե լուսինը լույս չունի, այլ

լույս ունի միայն արեգակը, իսկ երկրից լուսին անգո տարածությունը հազար անգամ հազար բյուր կանգուն է, և թե գետերն ու ծովերը, ինչպես վկայում է հունաց մեծերից...

Բույր ու լույս աշխարհը մագաղաթի վրա խաղում էր Ծ տառի չափ մի տեղ, էն հարսը արահետով հաց ու սամիթ էր բերում, գետերն ու ծովերը լուսնի հետ կապված են մակընթացությամբ ու տեղատվությամբ, և որովհետև մեր Հայքում չկան գետեր ու ծովեր՝ լուսնի հետ այդպես կապված են Ափրիկեի և Հռոմի գետերն ու ծովերը, ինչպես նաև Պոնտականը՝ որ մեզմից հեռու չէ, բայց մեզ պետք չէ, քանի որ երկրային հեղիեղուկ բաների հետ մենք գործ չունենք:

Հուշ ու քրիստոս Տիրանը հոգու պարզ հատակներում գտել էր աշխարհի մեղքերի իր բաժինը և շոգ խավարի մեջ բոբիկ ոտներով փնտրում էր Խորվիրապը՝ և նրա խանձված ճակատին ձիերի դոփյուն դիպավ. ուրեմն՝ դեռ ապրողներ կային, տեղից տեղ ձի էին վարում:

- Դու Տիրա՞նը չես, – ասացին:
- Տիրանն եմ:
- Այո, – ասացին նրանք:
- Ինչի՞ համար:
- Ոչինչ, մեզ համար լավ տունուտեղ ես թողել՝ դրա համար:
- Դուք ո՞վ եք, – ասաց:
- Քո թոռները:
- Բա ո՞ւր եք, ձեռն չեք հանում:
- Դժոխքում ենք: Կիլիկիա ենք, ուր ենք:
- Դե, ինչ որ կարողացել եմ, այ որդիք, էն եմ արել:
- Ի՞նչ ես կարողացել:
- Դուք կարողացեք, ես ուզում եմ դուք կարողանաք:
- Կարողանալու տե՞ղ ես թողել, որ կարողանանք:

Կիլիկեցի գործարար խելոքները ճանապարհ էին ընկել գտնելու դեղին դևի արևելքը, անապատը, Ղառաղոռունը, Մեծ Մանգու Խանին՝ մուգ-շագանակի պուտպուտուրիկ նժույգ նվիրելու, շարժելու Մեծ Խանի ծիծաղը իրենց կլոր աչքերի ու արևախանձ մորուքների

վրա, պատմելու սև Ափրիկեի և զարմանալի մայմունների մասին, Մեծ Մանգու Խանին ցույց տալու, թե ինչպես են պար գալիս Ափրիկեի մայմունները և այդպիսով Մեծ Մանգու Խանից պարզև ընդունելու իրենց Կիլիկիան, իրենց կանանց ծոցում քնելու իրավունքը, իրենց արտերի ցորենը, իրենց ապրելու ժամանակը: Հետո նրանք դաշտի անկրակ գիշերը լցրին վերադարձի հոգնած ձայներով. նրանք դաշտ իջան Աշտարակի սարերի ուսով, ծամելով իրենց սպասողների ուրախությունը, պարզևի լեղի դառնությունը և մահվան ազատարար իմաստը: Մթան մեջ նրանք միմյանց ցույց տվին Օշական գյուղը և ալարեցին թեքել ձիերի գլուխը դեպի Մաշտոցի գերեզման: Հիմա էլ հարկավոր էր հարավ եգիպտոս գնալ՝ Մեծ Մամլուքին պուտպուտուրիկ մտույգ տալու, պատմելու թե հյուսիսում մի տեսակ սպիտակ արջեր կան, որ պար են... բայց արժե՞ր գնալ: Կյանքն այդ ինչպես թանկացավ այնքան, որ պիտի մուրացվի հացի պես:

Բույր ու լույս աշխարհը մագաղաթին խամրում էր Ծ տառի չափ մի տեղ, էն հարսը չեկավ ու չեկավ, խամրեց ու հանգավ նաև հացի հուշը, նա աշխարհը քննելով հասել էր Կիլերոն ճարտասանին և քննում էր նրա ճարտասանության թերությունները, իսկ դուրսը, Արարատի տակ, Նախճավան, մի հարդանոց էր վառվում, հարդանոցում՝ հայ իշխանները, հարդանոցի կողքին ծալապատիկ նստել էր արաբ վաշտապետը և զարմանում էր թե մարդու միսն ինչու էր խոտի պես վառվելու, – Մարդը երևի խոտակեր է՝ դրանից, – ուզում էր վճռել արաբ վաշտապետը: Շինականը պոկվել էր աստծու անհծած այս երկրից ու փշատի կորիզներով, հին գրքերով, պապով-թոռով, շնով-այծով, սայլով ճամփա էր բռնել դեպի Լեհաստան: Արարատյան հովտի հին արևի մեջ հիմա ձմերուկ էր ուռչում, նամազի դանդաղ գնացքով ձիավարում էր թուրքերի խումբը և Հաֆըզ Էվլիյա Չելեբի աշխարհագետը իր թուրք թոռների համար տեսնում ու նկարագրում էր երկիրը.

«Մի քանի պատմագիրների ասելով Նեվշիրվան-Ադիլն է կառուցել Էրզնեի Ռում քաղաքը (ոմանք սխալ կերպով ասում են Արծն

քաղաք), սակայն ճիշտն այն է, որ կառուցել է Ակչա-կոյունլի փաղի-
շահներից Էրզեն Բայ բին-Սոքթար-բին Կյունդուզ Բայը: Սրա պա-
պերը եկել են Մահանի երկրից և Վանա ծովի եզերքին կառուցել են
Ախլաթի բերդը: Այս Վանա ծովի ամբողջ շրջագիծը 11 կոնաք է:
Արևելքից արևմուտք երկարությունը 68 մղոն է: Ծովեզերքին 9
բերդով երկու մեծ կղզի կա, որոնցից մեկը կոչվում է Ահդմ-վար և
ունի պնդակոփ բերդ ու հին վանք: Ծովի կենտրոնում խորությունը
հասնում է 70 կուլաջի: Բայց դառնանք Էրզենի Ռում քաղաքին, որը
կառուցել է Էրզեն Բայ բին-Սոքթար-բին Կյունդուզ Բայը. օդի և ջրի
շնորհիվ այս քաղաքի տասից մինչև քսան տարեկան պատանիները
նուրբ են ու բարեձև, ուստի և մարդու հիացնունք են պատճառում:
Դրանից հետո շուտով մորուսավորվում ու շատ մազոտ են լինում:
Աղրի-դուզի Ուչ-քիլիսե վանքի (Էջմիածին) կենտրոնական մասը
կառուցվել է Նեվ-շիրվան-Ադիլի կողմից: Երևանից դուրս եկանք 700
մարդուց կազմված կարավանով և 5 ժամ հետո հասանք Աբդալլար
գյուղը՝ որ 100 տնով աջեմի գյուղ է: Այդտեղից չորս ժամ դեպի
հյուսիս գնացինք և հասանք Աբարան գյուղը: Հետո մեր կարավանը
միացավ Մեծ Սերդարի բանակին և շարժվեցինք Մեզրելիստանի
վրա: Այս հաղթական արշավանքի ժամանակ մի կովը կես դու-
րուշով, մի ոչխարը հինգ ակչեով վաճառվեց: Աչըկ-Բաշի բեյը Սեր-
դարին հինգ ստրուկ և հինգ ստրկուհի նվեր ուղարկեց, նվաստիս էլ
մի ստրուկ, մի ստրկուհի նվիրեց: Ավարը տարանք Տրապիզունդ և
օգուտով վաճառեցինք»:

Քասախի առափնյա քարայրում նա հիշեց, որ Մովսեսի ժողո-
վուրդը փարավոնից փախչելիս ճաշակել է երկնից մանանա և
դրանով կշտացավ, և գրեց թե տկարմիտ են այն գլուխները, որ կար-
ծում են երկիրը լեռներից է շինած. լեռներից միայն Հայքն է շինած,
իսկ մեր ապրած մեծ երկիրը արեգակի ներքո մի մեծ տափարակ է և
այդ տափարակը վերջանում է մի մեծ ծովով, և ծովն անվերջ է ու
հունաց մեծերի բանաձևը՝ անքննելի: Եվ տափարակի վրա արե-
գակի ներքո արածում են կարմիր նախիրները, գնդեր են շարժում
զորավարները, չվում են երամ... Բայց ինչպե՞ս է պատահում, որ

արեգակը մի գիշերվա մեջ անցնում է ծովի անվերջությունը և երեկվա տեղից կրկին բարձրանում երկրիս վրա: Ծովն ուրեմն մեծ է, բայց անվերջ չէ, որովհետև ուրեմն արեգակը պիտի գնար ու այլևս չգար և գիշերը պիտի լիներ անվերջ և գիշերվա սառը շնչից պիտի մեռնեին գետերի ձկները, երկնքի թռչունները, այգիների պտուղները և արյունը մարդկանց մատների մեջ: Ծովը մի գիշերվա սահման ունի և սահման է մեր տափարակը արևելքից: Լճի պես, գետի պես, ափսեի ջրի պես՝ ծովը անտակ անդունդ չէ. եթե ծովի ջուրը մեր տկար մտքով ու մեր չնչին բռով դատարկեինք՝ տակը կմնար մեր տափարակի շարունակությունը. ուրեմն մեր տափարակը գնում է դեպի արևմուտք և արևելքից գալիս-միանում մեր ոտքի տակ մեր տափարակին. կլո՛ր է մեր տափարակը, ինչպես վկայում է հույն մեծերից... Ինչպես վկայում են ես: Երկիրն անվերջ է ինչպես խնձորը: Եվ արեգակը պատվում է մեր կլոր հողագնդի շուրջը: Բայց՝ մենք արեգակի համար կանք-չկանք, իսկ արեգակը մեզ համար՝ շատ կարևոր է որ լինի գիշեր-ցերեկի միջոցներով, որպեսզի չտաքանանք այրվենք և չմրսենք սառչենք. արեգակը հզոր է, մենք մենք ենք արեգակի շնորհիվ, ուրեմն պիտի որ մենք պատվելիս լինենք նրա շուրջը: Բայց այդ դեպքում հողագնդի կեսը կլիներ հավերժ ցերեկվա մեջ, կեսը՝ անվերջ գիշերվա տակ: Ե՛վ որպեսզի՝ մի կիսով ցերեկվա մեջ խարկված և մյուս կիսով գիշերվա տակ սառած հողագունդն անկյանք չպատվեր իրենից հզոր արեգակի շուրջը՝ արեգակն է պատվում հողագնդի շուրջը, քանի որ տիեզերքի խորհուրդը բարի է՝ և՛ բարին կարգադրել է այդպես:

Քարայրի խոր լռության մեջ բոբիկ ոտները մերկ գետնին՝ նա զգում էր Երկրի անդիմադիր գնացքը և որ այդ ընթացքը մի թեթև ճոճք ունի: Նա ուզում էր ունկնդրել արեգակի, երկրի, լուսնի ու աստղակապերի լուռ հավասարակշռությանը և լսում էր իր արյան բացակայությունը ծնկներն ի վար: Իր թափանցիկ մաշկի տակ նա հետևեց արյան պտույտին և գնաց մտավ ինքն իր սիրտը, և սիրտն անքնմեղի էր, որովհետև նրա շարժման պատճառը բարին էր:

Պրոկոպիոս Ամասեցու հունաց լեզվի քերականության քննությունը նա վերջացրեց ՌՌԴԵ թվականին, կցեց հիշատակարանը՝ թե

ինքն այլևս այր է մի հիվանդ, ձեռն այլևս հաստատ չէ, չի գորում նաև աչքը և որ շատ անգամ ինքը կերակրվել է հացի հուշով և ձեթի փոխարեն ծախսել է հաճախ աչքի լույսը մթի մեջ, և հառաչանքով ուզեց մեջքը շտկել,— Վախ, նամե, վախ,— բայց մեջքը չուղղվեց: Երկրի գունդը մատներին պահած, նա քարայրից ելավ, և գետի մրմունջը լցվեց նրա ականջների դատարկություն և ականջները խլացան, արարատյան լույսը ծեփվեց նրա ցավոտ աչքերին և աշխարհը պատվեց սպիտակ կուրությամբ: Լույսի մեջ հալիլելով՝ չորանը նստել էր բլրին և ոտների արանքում, քարաքոսին, դանակի ծայրով գրում էր անունը: Ձիավոր խումբ էր մոտենում: Է՛ն երբ էր՝ քաջ և բարեբախտ Ներսես Գիճրականցին հավաքեց հայոց իշխաններին՝ գնդերով պարսից զորքի դեմ կռիվ մղեցին, նրանց բոլորին առհասարակ կոտորեցին...

– Սախլասուն,— ասաց ձիավարողների խումբը:

Դա պարսից լեզուն չէր: Դպտաց լեզուն չէր: Հունաց լեզուն չէր: Վրաց լեզուն չէր, աղվանից խոսվածքը չէր: Քերականը մոլորվեց ու նայեց՝ շենը չկար, արահետը չկար, ոչխարի հոտը երկիրը կլպելով գալիս էր: Դաշտի մշուշների վրա քերականը փնտրեց Արարատի գագաթները, Արագածի գագաթները, նրա հայացքի հետ լեռները փնտրեց ձիավոր խումբն էլ՝ Աղրի-դաղի գլուխները չէին երևում, Ալանգյոզը դունման էր կապել. շոգ էր, մի հա՛տ սառը ձմերուկ լիներ...

– Սան յազըջըսա՞ն,— ասաց ձիավոր խումբը, ըստ երևույթին՝ հարցրեց, որովհետև դա ոչ դպտաց լեզուն էր, ոչ հունարեն:– Աֆարի՛ն,— ըստ երևույթին՝ գովեց, սակայն ոչ՝ պարթևերեն, ոչ՝ ասորերեն: Պոնտացի Միհրդատը քսան լեզու գիտեր, քերական չէր, բայց գիտեր քսան լեզու:– Բու բոյուք Իսքանդարըն թարըխը դը՞ր յոքսա Շահ-Իսմայլինին:

– Մարդ,— ասացին,— թուրքի լեզուն չէ՞ս հասկանում:

– Թո՞ւրք,— ասաց:

– Թուրք,— ասացին,— թուրք:

– Թո՞ւրք:– Քերականը տարուբերեց գլուխը:

– Էդ ձեռինդ էդ ի՞նչ է:

- Երկիրը, – ասաց քերականը: – Երկիրը կլոր է:
- Ի՞նչ երկիր, – ասացին: – Մեր երկիրը կլոր չի:
- Առհասարակ, – ասաց քերականը:
- Ա՞ռհասարակ, – ասացին, – առհասարակ, իհարկե, կլոր է. ձին եթե արևի հետ քշենք արևմուտք՝ կգնա՞նք, դուրս կգանք արևի հետ դարձյալ արևելքի անապատ: Ուրի՞շ:
- Արյունը մեր մեջ կանգնած չի, պտտվում է:
- Դու արյուն չունես, ո՞ւմ արյունը, – ասացին:
- Առհասարակ:
- Արյունը ինչո՞ւ է պտտվում:
- Սիրտը պտտեցնում է:
- Ո՞րտեղից գիտես, – ասացին:
- Քննել եմ, – ասաց:
- Դու մա՞րդ ես մորթել, – ծիծաղեց խումբը:
- Մտքի լույսով քննել եմ:
- Աֆարիմ, աֆարիմ, – ասացին: – Երկա՞ր ես քննել:
- Հազար հինգ հարյուր տարի:

Խումբն ասաց. – Եթե նետը, նիզակը, սուրը, գնդակը սրտին ենք տալիս՝ մարդը տեղնուտեղը մեռնում է. եթե պարանոցի կեսը կտրում ենք, բայց լրիվ չենք մորթում՝ մարդը դարձյալ մեռնում է, որովհետև սիրտը վիրավոր տեղից դուրս է մղում ամբողջ արյունը: Արփ-Արսըլան հարյուրապետը հազար մարդու վրա փորձ է արել ու տեսել է, որ մարդու մեջ կա հինգ լիտր արյուն: Արփ-Արսըլանը այդ հաշվել է մի ժամում, դու մտածել ես հազար հինգ հարյուր տարի: Ապրես: Արփ-Արսըլանի արածն էլ մի բան չի: Սաղոլ, չոխ սաղոլ, – ասացին: – Գտնելու ուրիշ բան էլ կլինի, քննիր ու գտիր: Ապրես:

Տանջված քերականը ողողվեց երանությամբ: Նրա թափանցիկ մաշկի տակ երևում էր սիրտը, երևում էր հանգչող թոքը, նա ներսից լուսավորված էր իմաստության խաղաղ լույսով: Նա երանությունից հավվեց ու հատավ Նոյի սպիտակ դաշտում մեզ համար թողնելով ոչ թե գետերի ու լճերի, հովիտների ու լեռների վերուվարումներով մի քիչ տարածություն, այլ Երկրի ամբողջ կլորությունը գրքի մեջ:

Խումբը մտրակեց մտույզները և գնաց կտրելու, այլաժիններից

մաքրելու, գեղեցկացնելու և հզորացնելու իր երկիրը, դարձնելու հայրենիք իր որդիների և որդոց որդիների համար:

Ազնիվ Օքիոփերիձեն (հորենական ազգանվամբ՝ Խաչթովմասյանը) փնտրում է Համազասպ հորը, Արուսյակ մորը, 1895-1914 թվականներին Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքում ծնված իր Անդրանիկ, Պռոշ, Անուշավան, Մանուկ, Հարություն, Համբարձում, Գառնուկ եղբայրներին (Ազնիվ Օքիոփերիձեն Գառնուկի իսկական անունը լավ չի հիշում, նա մեկուկես տարեկան էր, ընտանիքի երեխաները նրան Գառնուկ էին ասում), Մարիամ, Արփենիկ, Շուշան Խաչթովմասյան քույրերին. հորեղբայրներին՝ Արշակ, Սարգիս, նրանց զավակներին՝ Աշոտ, Արտաշես, Հակոբ, Գալուստ, մյուս Շուշան, Գուրգեն, Սուրեն, Աղավնի, Ոսկի, Թուխմանուկ Խաչթովմասյաններին, ծնված նույն Բիթլիս քաղաքում: Անհետ կորել են 1915-ին, Ազնիվն այս հիսուն տարի է փնտրում է՝ ձեն չեն հանում: Լուրեր կան, թե իթթիատ թուրքերն այնքան էլ բարբարոս չէին, և Ազնիվի հարազատները կենդանի են ու ապրում են այս մեծ աշխարհում որևէ մի տեղ՝ Արգենտինա, Ավստրալիա թե Ռուսաստան: Ազնիվնց տունը վանքի ետևն էր, տան ու վանքի արանքում այգին էր, այգուն ջրհոր կար:

– Խոսում է Երևանը: Լսեցեք Խորհրդային Միության հեռագրական գործակալության հաղորդագրությունը: Այն կապակցությամբ, որ առաջին իսկ բարեհաջող թռիչքով Լուսաստղ մոլորակ է իջեցվել Խորհրդային Միության գերբը պատկերող հուշադրոշ, արտասահմանի բուրժուական մամուլն անհանգստության նշաններ է ցույց տալիս՝ թե, արդյոք, դրանով Խորհրդային Միությունը չի՞ ցանկանում ասած լինել, որ, իբր, Լուսաստղ մոլորակը պատկանում է միայն իրեն, այսինքն՝ Խորհրդային Միությանը: Խորհրդային Միության հեռագրական գործակալությունը լիազորված է հայտարարելու, թե Տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված Խորհրդային գիտնականների ու ժողովուրդների ջանքերը զերծ են շահադիտական ամեն տեսակի նպատակներից, թե Տիեզերքը պատկանում է բոլոր ժողովուրդներին՝ լինեն նրանք տեխնիկապես լավ թե թույլ զարգացած, և որ, մասնավորապես, Խորհրդային Միությունը չի ասում, թե Լուսաստղ մոլորակը պատկանում է միայն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը:

...Լուսաստղ մոլորակը:

Լուսաստղ մոլորակը, Քաջարանի մոլիբդենը աստղագնաց հրթիռի գրահի մեջ: Ռոսլինի ոսկին, Մարտիրոս Սարյանը: Սարյանի ծաղիկները, թոնդրակյան համաշխարհային շարժումը: Սասնա խելառ քաջերի վեպը (Դավիթը թուրը վրա երեք որ քաշեց՝ քեռի Թորոսն առաջ եկավ. «Կաց, Դավիթ. եթե Մելքիս հավասար չկիսեցիր՝ էլ քու քեռին չեն»): Դավիթն իջեցրեց զարկը, մի կողմ կանգնեց – քեռի Թորոսն եկավ տեսնի հավասար՝ էր կիսել:

Հավասար չէր, մի կեսը մի կեսից տասը լիդր պակաս էր: Քեռին ասաց. «Ես քու քեռին չեմ», բայց նայեցին տեսան Մելիքը թայտաշղղ է, ջուխտտաշղղ չէ): Այնտեղ՝ ճորտական Գեղարդը, այնտեղ՝ ոսկի խաչքարերը: Չարենցը, երկաթագրերի դժվար կորերը, մատյանները, երգերը, առևտուրը, ուրիշների պալատներում հաջողությունը, մեր բանաստեղծությունը, մեր Կոմիտասը, մեր Շեքսպիրը, մեր Կոջոյանը – հե՛րն անհիժած, հիսուն տարվա մեռել Թալեաթն ով է, որ այնտեղից այստեղ թունավորի իմ կենաց բաժակը: Հերն անհիժած, այս ժողովուրդն իր ծանր մշակույթն այնպես է քաշում, ինչպես կռվում է մրջյունը լիքը հասկի դեմ, ինչպես ճարճատուն է սայլը խաչքարի տակ: Հերն անհիժած, ունես կանգնելու տեղ, այս հազարամյա կավոտ այգիներից պոկիր մի ողկույզ շեկ խաղող, մատներիդ մեջ պահիր մի բաժակ կոնյակ արևի դեմ, կանգնիր լավաշիաց փռած հովտում Նոյի լեռան կողքին և ասա. ես ես եմ:

Բայց... լավը... Լավը, բայց, այս աշխարհում, այնուամենայնիվ, շատանում է թե քչանում: Մարդկությունը, իր գոյության ամբողջ ընթացքում առաջին անգամ՝ մի կուշտ փորով հաց է ուտում: Արեգակի տակ այս շոգ երկիրը լցվել է առողջ աղջիկներով և նրանց ողորկ թևերին ծաղկապատվաստի առողջ հետքերով քաղաքակրթությունը դրել է իր հաղթանակի գույգ կնիքը: Բոլոր տներում հիմա տանտիրուհիները իրենց խառատ ու վարորդ ամուսինների համար մանրամասնորեն շերտավորում են մի թխվածք, որ դուր էր եկել Նապոլեոն կայսեր նրբացած քիմքին: Ինքնաթիռները, մրգերը, կինոները, նկարները, տաղանդները, կոնյակները, կանխատեսումները տրորելով առաջ անցնող իրականությունը, պիտակների ոսկին,– աստված, մինչև երեկ մարդկային կյանքը ինչու էր այդպես սողեսող գալիս սովի ու ժամտախտի տակերով: Վատիկանը բարեհաջող վերադարձ է մաղթում տիեզերագնացներին: Լավը շատանում է, վատը քչանում: Ինչու մենք չհասանք այս օրերին:

Համաշխարհային մեծ խառնակությունը պարզվել էր, օվկիանոսները հին խաղաղ շեշտով ծեծում էին իրենց ափերը, Գերմանիան գոց աչքերով մարսում էր պարտությունը, ռուսական սոցիալիզմի գոյությունը հանդարտ ներծծվում էր աշխարհի գիտակցությանը, նոր սահմանների մազուկած սյունները խամրում էին ու բուրում անսկիզբ մշտականության պատրանք, հաշմանդամները արևի ու հուշերի երանության մեջ զրուցում էին թե ինչքան գեղեցիկ կերպով եկավ ռումբը, ինչպես տարավ իրենց ոտքը, իրենք ինչպես...– Մուստաֆա Քեմալի մեծ աղջիկը խորքի դահլիճներում մի տեղ Շոպեն էր նվագում, խավոտ վարագույրները զով էին պահում արծակ սեռյակները, երկու ըմպանակ սուրճը հանգչում էր փոքրիկ սեղանին, Քեմալի աղջիկը կրթվել էր Եվրոպայում, Քեմալը լուռ մտքերի միջից եկավ, ասաց Մեծ Հարևանի հարգելի դեսպան Արալովին. «Այր՛... մենք հայերի հետ տմարդի վարվեցինք»: Խորքի դահլիճներում Շոպեն էին նվագում, բազկաթռի մեջ

Արալովը լուռ էր, երկիրն ու Սֆինքսը մի քիչ էլ ծերացան, Քեմալը թարթեց աչքերը և ասաց, և երևաց որ մտածում էր նույն մտքի վրա. «Այո՛... բայց մենք ուրիշ ելք չունեինք»։ Վերքն ուրիշի էր, դատելով տեսքից՝ խոր վերք էր, բայց եղածն արդեն եղած էր։— Այո...— ասաց Արալովը։

Այս ժողովրդի եղեռնը ինչու էր լինելու 1915-ին՝ երեկ. մորթելու, վառելու, մոխիրը ծովերին տալու, տեղը բանջարանոց անելու ժամանակ չգտաք 1315-ին, 815-ին, 15-ին։ Չեռքս, ախար, մեկնում եմ հասնում է այդ երկու միլիոն ուխտավորին, որ Փրկության լեռն էին ելնում։ Աշխարհում ցանված տիֆերի ու թաքնված դարանների միջով անցնես, անցնես, հասնես ու հոշոտվես քո տան դռանը։ Վարպետն իրավունք չունի քանդելու իր կապած կամուրջը, հայրն իրավունք չունի մեռցնելու իր ծնած զավակին, մարդն իրավունք չունի սպանելու ինքն իրեն, քանի որ իրեն ինքը չի ստեղծել,— դուք ինչպե՞ս կարողացաք մեր ճակատին նոր գիր գրել։

— Սարդարապատի ժամանակ մեր հրետանին այստեղ էր կանգնել, եղեգնուտից մի քիչ դետը։ Հրամանատարը կանգնած էր այստեղ, իմ կանգնած տեղը։ Ինքս հրետանավոր էի, բայց ինձ լավ չեմ հիշում։ Հրամանատարը կանգնած էր այստեղ, իմ կանգնած տեղը։ Ջարդ տվեցինք, էնպես լավ ջարդեցինք, որ թուրքի փաշան մեզ գովել էր։

Մեր հրետանին կանգնել էր այս Մեծամոր բլրի տակ, նրան չէին օգնում ոչ հին մազադաթները, ոչ հիքսոսները, ոչ էլ երկիրը գնդած գիտնականները, և ոռնոցով աղերսում էր գեթ Արարատյան հանրապետություն, հովտի զոնե կեսը։ Երկու միլիոն մեռելի վրա խնդալու իրավունքը ձեզ, երկու միլիոն դարբիններին ու բանաստեղծներին ավստալու կամ ամենևին էլ չափսոսալու իրավունքը ձեզ, երեք միլիոն թափառականի կարոտը ծաղրելն էլ ձեզ, այս մի երկու մարդուս թույլ տվեք կուչ գանք մեր հին մեծ տան մի անկյունում, խոստանում ենք լաց չլինել, խոստանում ենք չհիշեցնել... Ամբողջ օրը մեր հրետանին քանդութարափ էր անում մեր Սարդարապատը, ապա տղերքը լծվեցին և, եզան պես առանց ձայնի արտասվելով թնդանոթները թիզ առ թիզ քաշեցին Արագածն ի վեր Ապարան, որովհետև թշնամին ազնիվ ճակատամարտ, ազնիվ հաղթանակ կամ պարտություն չէր ուզում, քանի որ թշնամի չէր, այլ բորենի, և բորենին մեր ողկույզը չէր ուզում, այլ մեր լեշը։ Հետո թշնամին գովել էր թե այդ հայերը, ոչինչ, կարծես թե տղամարդ են, կռվում են,— և հիմա մի փափկամորթ մարմին է փաթաթվում վզիս, թշնամու գովեստն ինձ ուրախացնում է և ես շան մազի համ եմ առնում։

Կըռ կըռ կըռկռան, Կռունկները հա թռան, Կռունկների թևի տակ եղավ գարուն մեր դռան. երկու անգամ մեկ՝ երկու, երկու անգամ երկու՝ չորս, երկու անգամ երեք՝ վեց... Հովհաննես Թումանյանը երեխաների սիրելի բարեկամն է,— շապիկը մաքուր, եղունգները կտրած, պայուսակի մեջ չորս հատ գիրք, թանաքամանի փակ բերանը՝ բուք մատի տակ, վիզը բարակ մեծ գլուխն

ուսերին ճոճելով երեխան գնում էր դպրոց, մայիսյան առավոտը զնգում էր նրա մաքուր եութամբ մեկ, և շունը ցանկապատից թռավ նրա երեսին: Նրա լորձուկը քսվեց երեխայի աչքերին, երեխան մի պահ փաթաթվեց շան կեղտոտ մորթով ու մազ ծամեց, ապա նրա փխրուն ձեռքերը ետ հրեցին շան վիզը, նրա ոտքերը դեն նետեցին շան սայթաքուն ծանրությունը: Ձեռքը կոշտ մի բան գտավ ու բախվեց շան գանգին: Հիմա շունը կանգնել էր շատ մոտիկ ու լորձուկը հաչոցը շարտում էր նրա աչքերին: Նա այդ շնից չէր վախենում, նա զգվում էր այդ շան կեղտոտ հաչոցից և, տեսնելով իր երեսին հառված այդ հայացքի պարապությունը, ջղայնությունից ուշազնաց էր լինում: Թու, ծամածովում էր նա ու լաց էր լինում այն բանի համար, որ այդ չնչինը, այդ անասունը, այդ թրիքն իրեն արժանի էր համարում լինելու այդ մարդու հավասար հակառակորդը: Այնինչ՝ զգվելի է նրա մազը իմ բերանում:

Գիտե՞ս ինչ, կյանք է՝ և մի ակնկալի անփոթորիկ ծով. և եթե խորտակվում ես՝ մեղքը քոնն է և ոչ թե փոթորկինը, քանի որ փոթորիկը ծովն է: Ո՞ւր է խարիսխդ: Խարիսխդ...

Կաղ, կուզ, գեղեցիկ, ճաղատ, ծիծաղելի, մռայլ, սուտ անկոտորում, սուտ հանդիսավոր, դժգոհ, անվերջ դժգոհ, ուրախ, անմտության չափ ուրախ բանաստեղծների քո տոհմը, ծաղրածուների այդ մեծ ընտանիքը հիմա ամբողջ աշխարհով մեկ արև է փռում, արևի մեջ սամիթի բույր է փռում, ծիրանի ծառ է տնկում, լուսին է օծում, հմայիլի աղոթքով փափկեցնում է մարդու ժանիքները, իմաստավորելով մահը՝ լռին գերեզմանատներ է դնում արևի տակ, իմաստավորելով ծնունդը՝ ուրախության բաժակներ է փշրում, աղավնիներ ու աստղաթիռներ է շարտում երկինք, հավերժելու տարտամ ցանկությունը դարձնում է հայրենիքի կարոտ, փառաբանում է հացի լինելը և փառաբանում է հացի չլինելը, տղամարդ-ավազակներից շինում է հայր-ավանակներ և արևային երկիրը լցնում է մոլոր արահետներով ու բարի ավանակներով, բանաստեղծների այդ տոհմն ահա աղուտ հարթավայրը դարձրել է Արարատյան դաշտ, - և մարդիկ խմբավորվում են ըստ արիեստների և չկա խմբավորման մի այլ կերպ. և թող սուրբ լինի բանաստեղծների քո ընտանիքը, որի հոգնած նահապետի ճանապարհն այստեղ, այս բլրի տակ իր տան դռանը փակեցին զինվորական գործի մարդիկ ու պահանջեցին. «Անցաթուղք: Բանաստեղծ-մանաստեղծ չեմ հասկանում, անցաթուղք»: Նա նահապետ էր, բայց բանաստեղծների քո նահապետն էր և միայն քոնը: Բանաստեղծների քո տոհմն ահա կախադանների տակից խեղկատակորեն աչքով է անում, սխալմամբ բանտ է նստել և քմծիծաղով սպասում է թե հիմա թյուրիմացության համար ներողություն են խնդրելու, ատրճանակ բռնել չգիտե և գնում է մենամարտի, Հիտլերի ակամջն ի վեր մրջյունի ծայրով գոռում է՝ թե ինքը համաձայն չէ նրա կարծիքին և ունի բոլորովին այլ տեսակետ, կապում է կործանված կամուրջները և չի նկատում, որ իր ետևից քանդելով գալիս են

նույն կործանողները, կախաղանի տակից շփոթ ժպիտով նայում է քեզ՝ թե հիմա կհասկանան իրենց սխալը և սխալն էլ մարդկային է, ոչինչ: Հաղթած բանակների գեներալները պարտված բանակների գեներալներին չեն կախում, այլ նստում են նրանց հետ հացի և որովհետև բանակային օրապահիկը չի բավականացնի խնջույքին՝ հաղթած բանակի գեներալները շանաստակ են անում իրենց բանակի բանաստեղծներին: Հեռավոր ուղերթի վարորդները իրարու ողջունում են զվարթ չչոցով ու ձախ ձեռքի զուսպ բարձրացմամբ՝ հայտնելով միմյանց ողջ տեսնելու ուրախության և նույն սիրո մասին առ իրենց արիեստը: Թշնամական ռմբակիրները հանդիպակաց սլացքով գնում են քարուքանդ անելու թշնամական քաղաքները և նույն երկնքի մեջ չեն բախվում մեկմեկու: Այդպես:

Արարատի մոտ ահա արև ու անձրև է թափվում և կանաչ-կարմիր է կապել ծիածանը. այդ նշանակում է, որ արև-անձրևից դեմը կա մի գյուղ, երեխաները, խմբով, չարչարում են մի ավանակի, խմբով՝ բալի մի ծառ են պոկել ու տարել գետափ ուտելու և լողալու, հարյուր հոգով քչփչում են թե ցամաք ձորում մի կին մոռացել է իր ներքնաշորը և ամբողջ գյուղով մեկ ծղրտում են, թե Ահմադը ցամաք ձորում Գյուլի շորերը հանե՛լ է,– իսկ աթարի դեզի մոտ գետնին գամվել է վիզը բարակ մի տղա, խոշոր աչքերով շոյում է ծիածանը և լացը գալիս է, որովհետև ծիածանը ծնվում է աննկատ և մեռնում է անշշուկ: Իսկ իր ճակատին ծիածանի ցուլքի դեմ գրած է անջնջելի գրով, թե նրա ճանապարհը փակելու են կախաղանը, խելագարությունը և ինքնասպանությունը, և դա ամխուսափելի է, քանի որ բանաստեղծի նրա հիվանդությունը տոհմական է:

Ինչպես գեներալները չեն սպանում գեներալներին և հեռավոր ուղերթի վարորդները ողջունում են միմյանց, մեռնող ծիածանի տակով այդպես շշնջա քո տոհմի այդ երեխային՝ թող սուրբ լինի քո սրտի դողը և ընդունելի լինի մատաղի գառան քո վիզը: Եվ իմացած եղիր, որ ամենահզորը քո աստվածությունն է, որովհետև խոստովանանքի բառը հնչում է միայն քո աստվածության տաճարներում:

«Մեծ ուրախությամբ ես դարձյալ կգայի Խորհրդային Միություն, բայց անելիք շատ ունեմ: Մեր վիպասանները ֆրանսացի հրատարակիչների համար փնտրված հեղինակներ են: Պետք է վերջացնեն ձեռքիս գործը,– հրաժեշտ տալով ասաց թուրք առաջադեմ գրողը,– և սկսեմ աշխատանքը վաղուց մտածված մի գրքի վրա, որ լինելու է քսանական թվականներին իմ ժողովրդի վարած ազգային-ազատագրական պատերազմի մասին»:

Կուշտ քնից հետո նա կնստի գրելու: Արարատից Բոսֆոր ու Պոնտական աղի ջրերից Հարավային անապատ Թուրքիայի քաղցր-կծու ուժը կլցվի նրա թոքերը, և հրճվանքի ծղրտոցով նա փառք կտա ոջլոտ այն չոբանին, որ մեզնի մահակով փշրեց հայ-հույն ասպետի զրահը և ծեծելով քչեց նրան ոչխարի հետ՝ իր սերնդի համար աստծուց նախանշված հայրենիքից: Նա կօրհներգի

իր նախնու հաղթանակը արաբների դեմ: Եվ քրդերի դեմ: Եվ հայերի դեմ: Եվ կօրհներգի հույներին պարտվելու համար, և առանձին՝ արաբների պարտությունը, և հատուկ՝ հայերի պարտությունը: Խլրտացող սրտով նա կպաշտի այն բրոնզը, որ պղնձից չէր գատվել և զրահի փշրվելու շնորհ դարձավ: Նա կերկրպագի հայերից մաքրված տարածությունների ամայի հզորությունը և առնական կորով կցանկանա թուրք յուրաքանչյուր տղամարդու մեջքի՝ այդ ամայությունը լցնելու թուրք մանչուկներով: Եվ նոր միայն... և նոր միայն իր հայրենիքի դիվանագետներին նա կհուշի խոսք բացել հայերին պատճառված վնասի մասին և վեհանձնաբար հանձն առնել վնասի հատուցումը՝ մի երկու կամ մի երկու հազար ոսկի, թող զման ձեռները կտրեն: Միայն թե... Թուրքիան ո՞ւմ է հատուցելու վնասը՝ դաշնակցականների՞ն, ռամկավարների՞ն, հնչակյանների՞ն, Ընդհանուր բարեգործականի՞ն, Էջմիածնի կաթողիկոսարանի՞ն: Անթիլիասի՞ կաթողիկոսարանին, համայնավարների՞ն, թե՞ Միավորված ազգերի կազմակերպությանը: Թող հայերն իրենց մեջ վճռեն այդ խնդիրը՝ Թուրքիան պատրաստ է վեհանձնաբար հատուցելու իր պատճառած վնասը, որ այնքան էլ ինքը չէր պատճառել, այլ դժբախտ հանգամանքները, և հանգամանքների դժբախտացմանը նպաստել էր իրենց հայերի վարքը:

Եվ այդ ժամանակ միլիոնատիրոջ որդու և հզոր երկրի զավակի նրա կարգուկանոնավոր ելույթան մեջ խուլ կոմքա բանաստեղծի նյարդը՝ խելացի դիվանագիտության շերտերի տակ, և նա վար կղնի գրիչը և կնայի ինքը իր ներսը. և տխուր կասի ինքը իրեն. բայց չէ՞ որ երբ մենք մորթում էինք նրանց՝ նրանք բաց աչքերով նայում էին մեր աչքերին և չէին հավատում, որ մորթում ենք:

Եվ այդ ժամանակ, Նեֆզատ Ուստյուն, քարը ձեռքներին կանգնելու են քո գլխավերևը և լուրջ ժպիտով պահանջելու են. «Նեֆզատ Ուստյուն, բռնաբարիր, թե չէ քեզ կբռնաբարենք... եթե իրեշտակ չես»: Աստված այդ պահին քեզ ուժ տա, պահպանելով քո մեջ բանաստեղծին, վախկոտի պես ծնկաստղ աղերսելու քո կյանքը և խանգարված իմաստունի պես կրկնելու քո հավատամքը. «Երբ մենք նրանց մորթում էինք՝ նրանք բաց աչքերով նայում էին մեր աչքերին և չէին հավատում, որ մորթում ենք»:

Մեխավոր կոշիկներ հագած թուրք աղջիկը ամերիկացի մարզիկների հետ մագլցել է Արարատ և սառույցների վրա պորտապար է տվել: Որ թուրք գեղեցկուհին ամերիկացի մարզիկների հետ Արարատի գլխին պորտապար է տվել՝ դրանից միայն իմ սիրտն է կանգ առնում – Լեռն իր համար կա ինքնամփոփ, լուռ, անամդրադարձ: Մեծամոր բլուրը կանգնած է տոթի տակ: Արագիլը վերջին եղեգնուտից գորտ տարավ դեպի բարդի: Թուխ, կողակ, դաբաղած ուսերով տղաների խումբը Մեծամոր գետն ի վեր ձուկ բռնելով բարձրանում է: Ախպերիկների խումբը կանաչների միջից ձկներ է գտնում ու

հազցնում ուռի ճիպտիսին: Լճակի մեջ ուռիների ստվերները մտածում են դառնա՞ն ձկների թե մի քիչ էլ քնեն: Հին ջրաղացը մտածում է՝ փլվի՞ թե սպասի երբևէ երգելու ցորենի ու հեքիաթի երգը: Արծաթագույն օձն առավ պինդկրունկ տղաների արևայրուք բույրն ու գլուխն ազատելու տեղ փնտրեց ջրիմուռների տակ. գլուխը չի երևում, իսկ մարմինը կեռիկ-մեռիկ փայլվում է ծփանքի հետ: Գոմեշները շոգից պայթում են և ալարում են մտնել ջրի մեջ:

Հենց այդ պահին աշխարհի օրենսդիր Փարիզում կտրվեց թրքական տասըհազարամյա արվեստի ցուցահանդեսի ժապավենը. ցուցահանդեսի ցորնաթուխ ջահել տնօրենը գեղեցիկ տղամարդ էր, և եվրոպացի կանայք ու եվրոպացի տղամարդիկ հավատացին, որ այդ արվեստը թրքական է և շատ հին է, և պանթրքական քարտեզը մի քիչ էլ դարձավ հեթեթ, ճշմարտանման, հեռավոր պատեհության երկիր, և Երևան քաղաք-ինքնավարությունը իր համար կուշտ ու ազատ ապրեց այդ երկրի կենտրոնում:

Այն պահին, երբ Փարիզում կտրվեց թրքական հին արվեստի ցուցահանդեսի ժապավենը, Մեծամոր բլրի մոտ, եղեգնուտից մի քիչ դետը, ուր Սարդարապատի պատերազմով կանգնել էր հայերի հրետանին – հայերի հրետանին, – այդտեղ ահա մի երկար սփռոց բացվեց և շարվեցին բաժակները, մրգահյութերը, կոնյակը, կանաչին, լավաշը, պանիրը, աղը, Լուսնթազը, Երեվակը, Հայկի համաստեղությունը, Համբարձումյանի միգամածությունները, մեր հյուրասեր լինելը սփռոցին շարեցին մի կին ու մի տղամարդ և չբացան: Ինքնիրեն վառվեց փայտի կույտը, ինքնիրեն փլվեց ու շամփուրների շարքը վրան սպասեց աստղագետ հյուրերին: Լեռն աստծու հայացքի տակ կա ներհայաց ու խուլ՝ հավիտենական յոգ: (Եվ ապա գոցվեցին աղբյուրների պղտոր ակները ջրերի տակ և գոցվեցին երկնքի պատուհանները նույնպես. և ջրերը երկրի վրա գնալով նվազում էին, և տապանը նստեց Արարատ լեռան վրա. և Նոյն սպասեց դարձյալ յոթ օր և, լուսանալու հետ, իջավ Արարատյան հովիտ:) Հին հանգած ջրաղացում իրերն սպասում են դյուբվող հայացքի՝ որ նրա դեմ մթի մեջ ետ գնան հազար տարով, երկու հազար տարվա հատակներում չպատ-կանեն ոչ ոքի, կռվեն երրորդ ու չորրորդ հազարամյակների սահմանի վրա և չնչին կորուստների խիտ շարքով գնա՞ն տանեն լուսավոր մի բացատ խավարի մեջ, Մեծամոր, զրո թվականից առաջ տաս-նիններորդ դար. դարբինները կրակի մոգությամբ պողպատե սուրն ազատում են քարի բանտից – զընգ-զընգ-զընգ-զընգ. Լեռը լողում է մշուշների վրա, տղաները ջրում ձուկ են բռնում և շարտում ափ, գոմեշները տնքում են լճերի մեջ, աստղագետները հորերի մութից հետևում են Տիեզեր-քի լարված հավասարակշռությանը, արտքաղից հետո հնձվորները տաճարի դռանը ցլիկ են մորթել իրենց երեխաների ու համկալների համար, – և նրանք բոլորն իրենց համարում են հայ, երկիրը՝ Հայք:

Ողջ բլուրը, պեղածոները, քարաքոսի կերած մեհենագրերը, աստեղային որմնագիր քարտեզը, տաճարների թե բնակարանների հիմքերը, կավե բա-

ցահայտ բազինը, հնոցները, հալոցքի թափոնը, վառված ոսկորը հնոցների պատերում, օգտագործվել չիասցված ոսկորի պահեստը,- մեհենագիրը քարաքոսի տակ հիքսոս կամ հայքսոս կամ հայ կամ աստծու կրակ վերծանելու համար ի՞նչ է պակասում: Պակասում է: Մենք ի՞նչ դնենք հնագիտության թանգարանում: Յուրասիրություն և քաղաքավարություն, այդպիսով աստղագետ հյուրերի կարծիքը:

Քուրդը նստել է բլրի գլխին, քրդի տակ, քարին, Մեծ արջի համաստեղությունն է, և շվշվացնելով ինքը ասում է իրեն, թե նստելու, ոչինչ, լավ տեղ է գտել, կարող է կորած ձիու երևալուն սպասելով մտածել փուչ կյանքի մասին՝ ձիու գնից սկսած մինչև առհասարակ մարդուս կյանքի արժեքը. է՛, մի հատ պապիրոս է պետք:

- Դու քո՞ւրդ ես, բարի օր:
- Խի՞: Մի հատ ծխելիք տվեք:
- Էնպես, հարցնում եմ:
- Ես հայ քրիստոնյա եմ:
- Ո՞նց ես հայ քրիստոնյա, որ քուրդ ես:
- Է՛, իմ ի՞նչն է քուրդ, մի կորած ձի ունեն ու տասնմեկ երեխա:
- Ոչխար՝ չունես:
- Տասնմեկ երեխա ունեմ:
- Բա ինչո՞ւ ես ձի պահում՝ որ ոչխար չունես:
- Ուր է թե պահում եմ, էս է կորել է:
- Թող կորած էլ մնա, ինչի՞դ է պետք:
- Գնամ սարը, տեսնեմ ոչխարս ոնց է:
- Քանի՞ ոչխար ունես:
- Մի տասնհինգ հատ կար, չորսը սատկեց, մնաց քառասունը:
- Բա ասում ես չունես:
- Ես գիշեր գելն ուտելու է՛ չեմ ունենալու:
- Գուցե չուտի:
- Գուցեն տամեմ բազառ ծախեմ:
- Ուրեմն՝ վատ ես ապրում:
- Ինչո՞ւ եմ վատ ապրում:
- Տասնմեկ երեխա ունես, ասացիր:
- Երեխան ապրուստ է: Նրանց կերածը մի բան չի, բայց իրենք մեծ ապրուստ են:
- Քանի՞ տարեկան ես:
- Ինչքա՞ն կլինեմ:
- Քառասուն-քառասունհինգ:
- Քառասուն:
- Կի՞նդ քանիս է:

– Իրա համար կնիկ է, տարեկանը նրա ինչի՞ն է պետք:

Եկավ, Մեծամոր բլրի գլխով վայրեջքի գնաց գերիզոր ինքնաթիռը, և գոմեշների թախիծը և գոմեշներն իրենց կոր պարանոցներով գեղեցիկ էին:

– Սրանց տերը գիտե՞ս ով է,– բացատրեց թե սպառնաց գոմշապահը,– սրանց տերը անասնաբուծական ինստիտուտի մի դասախոս է: Դիսերտացիա է գրում: Գյուղատնտեսության միջխտությունում, երևում է, ուժեղ պաշտպան ունի՝ քանի որ կարողանում են մեր ղեկավարությանը ստիպել, որ էս գոմեշները պահենք դիսերտացիայի համար: Հիմա սրանց բախտը նրա դիսերտացիայից է կախված, դիսերտացիան ուշ վերջացրեց՝ սրանք ուշ կվերջանան, թե չէ շուտ վերջացրեց՝ հենց վաղն էլ սրանց արմատը կկտրենք:

– Հապա եթե ապացուցեց, որ գոմեշ պահելը տնտեսապես շահավետ է:

– Ո՞վ, դասախոսը:

– Դասախոսը:

– Հայ թո տունը շինվի: Նա՞ պիտի ասի, որ տնտեսապես օգտակար է:

– Հապա՞:

– Օգտակարը՝ օգտակար է, էդ ուրիշ բան, որ դասախոս լինելն ավելի օգտակար է: Դուք էլ, պատահաբար, հո դասախոս չե՞ք: Բայց ամոթի հարցն էլ կա. գալիս են հին աստղադիտարան տեսնելու՝ գոմեշ են տեսնում: Ես, օրինակ, պատմագետ չեմ, բայց ամոթ է: Ծրագիրն էնպես է, որ գյուղի տակից սկսած, հին գերեզմանոցներն էլ հետը, էս բլուրն առնվի բարձր պատերի մեջ՝ հին հնությունների ինստիտուտինն է: Եվ էդ դեպքում գոմեշների հարցը ինքնիրեն վերջանում է: Որովհետև լճերը մտնում են թանգարան:

– Էդ ո՞ւմ ծրագիրն է:

– Ես եմ մտածել, բայց լսեցի, որ իրենք էլ են մտածել:

– Իսկ եթե գյուղն իր հողերը չտա սրանց:

– Էդ էլ է մտածված. թանգարանը հանձնում են մի ուժեղ հիմնարկի, Վիկտոր Համբարձումյանի հիմնարկին, էդ հիմնարկը գյուղմիջխտությունից էս տարածությունը պահանջում է, գյուղմիջխտությունն ով է՝ որ կարողանա մերժել:

– Էդ է՞լ դու ես մտածել:

– Բանիս անո՞ւնն ինչ է, բայց, չէ, ես չեմ մտածել:

– Ո՞վ է մտածել:

– Էստեղի տերուտիրականը:

– Կորյո՞ւնը:

– Սկրոչյա՞նը: Սկրոչյանը երկրաբան է, նրա գործը ջուր գտնելն էր, աստղադիտարանը-բանը նա կամավոր է գտել: Ուղարկել էին ջուր գտնելու՝ էս հնությունները գտավ: Էստեղի տերուտիրականը գոմշաբուծարանի վարիչն էր, տեսավ տղերքը էստեղ պտտվում են՝ եկավ կողքները կանգնեց թե՛ էս պահակ: Աշխատավարձ չկար, բան չկար, էնքան կանգնեց՝ դարձրին հաս-

տիքավոր: Հիմա ռոճիկն ակադեմիայից է ստանում: Փաստորեն ինձանից հեռատես էր մարդը, և արժե:

– Դո՞ւ ես շատ ստանում թե ինքը:

– Ո՞նց:

– Աշխատավարձ, ապրուստ, եկամուտ:

– Ե՛ս, նրա ստացածն ինչ է որ:

– Բա ինչո՞ւ ես նախանձում:

– Ո՞նց թե: Էզուցվա օրը գոմեշների հարցը վերանում է, իսկ թանգարանը մեծ ապագա ունի: Վիկտոր Համբարձումյանն է ասել:

– Թանգարանի ապագան պահակի՞ն ինչ. հիսուն տարեկան մարդ է, հո նոր-նոր գիտնական չի դառնալու:

– Ո՞նց թե: Մարդ կտեսնի, կխոսեն՝ կլսի, մի բան էլ ինքը կասի:

– Ո՞րտեղացի ես:

– Էստեղացի:

– Բնիկ:

– Ծնողներս սասունցի են, ես էստեղ եմ ծնվել, մեր գյուղն առհասարակ սասունցի է: Տասնութ թվին եկել են, թուրքերին կռվով դուրս են քշել, էստեղ ապրում ենք: Չեյվան թուրքի անուն է, թուրքերից է մնացել:

– Որ կռվով դուրս են քշել՝ լա՞վ են արել:

– Իմ կարծիքով՝ ոչ: Եղած-չեղածը մի գյուղ ժողովուրդ է եղել, իսկ Երևանը մեծ քաղաք է, հազար գյուղ կտեղավորի:

– Իսկ որ թուրքերն են ձեզ դուրս արել Սասունից:

– Իրենք գուցե վատ մտքով են դուրս արել, բայց մենք հիմա քաղաքավարի կյանքով ապրում ենք:

– Քանի՞ երեխա ունես:

– Երկու երեխա. մի տղա ու մի աղջիկ:

– Ինչո՞ւ էդքան քիչ:

– Քիչ չէ, մի տղա ու մի աղջիկ՝ լավ է: Տղաս դպրոցում գերազանցիկ է, աղջիկս դաշնամուր է նվագում:

– Բնակարանդ երկի նեղ է, հա՞:

– Բնակարանս հինգ սենյակ է, այգի, խոհանոց, թեմիս:

– Երեխաներդ քիչ են:

– Տնաշեն, հո էն հին խավար ժամանակներում չենք ապրում: Ամոթ էլ էր, չէ:

Գյուղից մի հեծանվորդ ելավ, ուտոստում է արտերի ճանապարհին, բայց կարծես առաջ չի գալիս, ապա՝ հեծանիվը թողել էր ու, ծղոտե գլխարկը ձեռքին, գալիս էր ընդհատ վազքով: Երբեմն բան էր գոռում:

Կողերը ցեխոտ գոմեշը եկավ կանգնեց ջրաղացի դռանն ու մռնգաց բաց դռնից ներս. օձն զգաց, որ կողակ տղաներն իրեն տեսել են ջրի տակ ու լող տվեց փախչելու, բայց մի ընկալե անց նրա վզին մետաղալար էին փա-

թաթել ու ետ ջուրը նետել. բոբիկ-տկլոր մի տղայիկ ու մի աղջնակ լճակի վրա ձեռքները ծնկներին՝ սրսփուն վախով ցավում էին կիսամեռ օձի համար. քառասուն օրվա տառապանքով, ջրով-կրակով քարաքոսից մաքրվեց ժայռի մեհենագիր ելուստը և ժպտաց գաղտնիք բացողի պես, և բեռլիններից-մոսկվաներից պրոֆեսոր բերվեց կարդալու «Տիեզերքն անսահման է և Տիեզերքի սահմանը խելագարությունն է», բայց կարդաց ալիվալի, այսինքն՝ ալի վալի, ուրեմն՝ Ալի Վալի, ստացվում է՝ Ալի և Վալի, նշանակում է՝ Ալի, Վալի, թուրք երկու չոբան, հին Ձեյվա գյուղացի, ոչխարը՝ բլրի գլխին, գայլի ահ՝ չկա, դանակով փափուկ տուֆին գրում են Ալի, Վալի. անցնող բեռնատարի վարորդը նկատեց Մեծամորի լիաբուխ աղբյուրը, մեքենան կանգնեցրեց, ընկերոջ հետ եկավ ջրի մոտ ուտելու երշիկ, լավաշ, տաքդեղ, վարունգի ու ձվի կեղևը թողնելու աղբյուրի մոտ. քուրդը ծխախոտ է գտել, նստել հարթավայրի ամենահարմար այդ բլրին և երգով իրար է տվել աշխարհի ու կորած ձիու ցավերը. չսափրված գոմշապահը կողմնակի մարդկանց հետ վճռում է Մեծամոր բլրի ապագան, իսկ նրա գոմեշը հիմա ջրաղացում տակնուվրա կանի իր նախնիների ու իր տիրոջ նախնիների գիտական առասպելը. կոդակ տղաները խառնում են լճակի պարզ ջրերը, իսկ մեն մի շալվարիկով աղջնակն ու տղա երեխան փոշոտ ճանապարհով վազեցնում են իրենց ետևից կիսամեռ օձը:

Ծղոտե գլխարկով մարդը եկավ հասավ բլուր և նրա ձեռքին փայլփլեց խոսափողը: Եվ նրան նախանձով նայում էր գոմշապահը: Ե՛վ որպեսզի՜ ճապոնիայից ու ես ինչ իմանամ որտեղից մինչև Արգենտինա ու Ցեյլոն ողջ կասկածամիտ աշխարհը չսսի թե Վիկտոր Դամբարձունյանը գոմեշների, կորած ձիերի, մերկ տղաների ու վարունգ ուտող վարորդների մեջ կանգնած է արել աստղերի ծննդաբանության իր գուշակությունը, այլ նրա նախնիները եղել են միայն աստղագետ՝ հարկավոր է Մեծամոր բլուրը մաքրել այս անվայելուչ բաներից, տակը թողնել միայն չոր բլուրը: Խոսափողը ծղոտե գլխարկով մարդու ձեռքին դանդաղ բարձրացավ, ծածկեց դեմքը. հին գոմշապահի դեմքը դարձավ խոսափող.

– Բլուրն ազատել կողմնակի բաներից:

– Առաջարկվում է բլուրն ազատել կողմնակի բաներից:

Խոսափողը փայլփլելով նայեց մեզ ու գոմշապահին: Գոմշապահին.

– Քեզ եմ ասում, էյ, ես կենդանիներդ էս ի՞նչ անասուն են, քշիր էս սահմաններից:

– Ովքեր... անմիջական... առնչություն չունեն բանգարանի հետ՝ ազատեն բլրի տարածությունը:

– Արտասահմանյան հյուրեր են ժամանում, բլուրն ազատել կողմնակի բաներից:

– Ձեր էդ վարունգը տարեք ձեր տանը կերեք, բլուրն ազատել կողմնակի բաներից:

Մենք ընկերներս փողկապավորված ենք, կողմնակին կորած ձիու հոգսն է, գոմեշները, հաց ուտող վարորդները, մերկ տղաները: Բայց շրջակայքը հսկելու ամենահարմար տեղը այս բլուրն է: Քուրդը հարցրեց.

- Էն ի՞նչ է ասում:
- Ասում է ձիո գնա փնտրիր էնտեղ, որտեղ ճապոնացիներ չեն գալու:
- Ճապոնացին ո՞վ է:
- Ասողագետ է, գալու է էստեղ:
- Ճապոնիան որտե՞ղ է: Մի ծխելիք տվեք:
- Չիմաստանի մոտ է:
- Հա: Վայրենի է, մարդ չի տեսե՞լ:

Վարորդն ու ընկերը ուտելիքը վերջացրին, մի կուշտ խմեցին աղբյուրի ջրից, նայեցին Մասսին, երկնքին, խեղդվելով բխող աղբյուրին՝ դրանց կապի մեջ կար ինչ-որ թախծոտ իմաստ, որը չէր որոշակիանում, ուղղակի կար այնքան, ինչքան որ կա առհասարակ մի թախծոտ իմաստ աստծու ստեղծած ամեն ինչի մեջ. նրանք ջրից ու հացից այլևս ուզելիք չունեին. նրանք լիովին պատրաստ էին դիմավորելու համաշխարհային գիտնականներին. իրենք իրենց խորապես հարգելով՝ նրանք նստեցին ու սպասեցին. նրանք գիտեն Անդրանիկի, Նոյի, Փարիզի, կոմունիզմի և կապիտալիզմի մասին, եթե պահանջվի՝ մեր ազգին խայտառակ չեն անի, իսկ առհասարակ՝ Հայաստան շատ են գալիս ևս վերջերս, հարկավոր է մի փոքրիկ արհեստանոց սարքել մի նկուղում, արհեստանոցում սարքել գույգ Մասսի պատկերը, փոքրիկ վանքեր և վաճառել այնտեղ, որտեղ արտասահմանցի հյուրեր շատ են լինում, թե չէ՝ վարորդի գործն էլ մի գործ չի:

Գիշերը բացահայտված կարասների մոտ տնտեսության ղեկավարը նստել էր, Արարատյան հովտի բոլոր ձայներն ու մտադրություններն ալիք էին տալիս ու հանգչում թե քնում կարասների մեջ, և այդ մարդն զգում էր, որ ինքը հիմա հանցանք է գործելու: Հերն անիծած, ոչ Ամերիկան է Ամերիկայի նախագահինը, ոչ էլ այս այգին է այս մարդունը. թող գան, դարձնեն թանգարան, այգեպանը դառնա հյուրերի առջև թանգարանի դուռը բացող, իսկ հացն ու զինին, ինքնաթիռով, թող բերեն Մաղագասկարից: Ինքնաթիռին մի բան պատահի՝ թող ուտեն թանգարանի կարասներն ու ուլունքները:

Լեռնային Բյուրականի աստղադիտարանից կեռմաններով իջավ, հարգալիր դանդաղությամբ մտավ հարթավայր, արևի մեջ և զով և տաքուկ փայլվելով եկավ, այգուն հասավ լուսավոր մեքենաների շարքը, շարժիչները մարեց: Արդե՞ն: Ապա թեքեց ուղին ու գնաց դեպի Մեծամոր: Խեղճ Մեծամոր, խեղճ Ջելվա, խեղճ Էջմիածին: Ախպեր, իմ այգուն եմ գտել՝ իմն է. իմն է, չեմ պահում՝ կտորում եմ – թըխկ: Արգիշտին ինքը բե՞րո՞ղ է կառուցել – թըխկ,– զինո՞ւ է խմել – շըխկ,– զո՞րք է գումարել, մի զո՞րծ է արել, թե՞ պահակ է կանգնել իր Արգիշտի պապի թրին – շըխկ: Եվ վերջապես Արգիշտին թագավոր, ես գյուղացի մարդ – թըխկ,– մեր շահերն իրար չեն բռնում, գնա-

ցեք գիրք կարդացեք – թըխկ-շըխկ: Մեծ երկիր էինք՝ բան չմնաց, եղածն էլ Արգիշտո՞ւն տանք – թըխկ – շըխկ, թըխկ – թըխկ – թըխկ... Ամտերներն ինչ էլ պինդ են: Հո նկատո՞ղ չեղավ – շըխկ: Արգիշտի: Արգիշտի էլ անո՞ւն լինի: Փոխանակ՝ Վազգեն, Արշակ, Մեսրոպ, Գևորգ, Վռամ – Ար-գիշ-տի: Ինչ էլ լավ թու կպահեին, է, Վարսիկն իմանա... էյ, արտասահմանցիներ, Արգիշտին կանչում է խաղող ուտելու, եկեք խաղող կերեք: Եվ երկրի վրա քառասուն օր ջրհեղեղ եղավ... Եվ տապանը նստեց լեռան վրա: Եվ երկիրը ներքաշեց ջուրը, և Նոյն իջավ Արարատյան դաշտ: Եվ, ախպեր, մեր տանը ջրհեղեղ չի եղել, զնացեք ձեր տանը փնտրեցեք ջրհեղեղ:

Տղաների մերկ խուճը աղբյուրը շրջապատել էր և մարմրող աչքերով նայում էր հեռվի մշուշներին: Խոսափողը նրանց հրամայեց.

– Ես օձն էս ո՞վ է Ես ջուրը զցել, ձեզ եմ ասում, վերցրեք ու կորեք Ես-տեղից: Մարդիկ են գալիս:

Կարճ պարանոցները նրանք դանդաղ թեքեցին դեպի խոսափողը: Նրանք նրան ոչինչ չասացին, ոչինչ չարեցին, միայն, խմբով, կարճ պարանոցները դանդաղ թեքեցին դեպի խոսափողը, – և հյուր էին ծղոտե գլխարկը, փողկապավորների խուճը, խոսափողը, թանգարանը, մի տեսակ եվրոպաբար հայկական սփռոցը, Նոյը, հիքսոսները: Բերովի էին ուռիները, բնիկ էին իրենք: Նրանք կարծես չտեսան խոսափողը...

Բայց հաջորդ պահին նրանք իջնում էին Մեծամորի ջրերն ի վար: Մեջքները դաբաղած, կողակ, վիզները կարճ, տաբատները քշտած ծնկներից վեր: Մեկը նրանցից նայեց հանգիստ թախիծով, ապա ուտնեց ու կարկտահարեց գետինը արագացող վազքով դեպի Վաղարշապատ՝ թե Մաշտոց վարդապետը զրերը բերում է... Փշատենու մոտ կանգնել է Մովսես բարձրահասակ պատմահայրը և նայում է հոգնա՛ծ, հոգնած. արևի մեջ հալվելով՝ հեռանում են կիլիկեցի բանագնացները. Մաշտոց երանելու թաղման թափորը գնում է Օշական. Ներսես Մեծ քահանայապետը խիստ է զայրացել, գավազանը գետնին խփելով գնում է արքունիք՝ այ Արշակ, այ որդի, էս էսպես չի լինի, է... շոգ մշուշների տակ քայլ են փոխում կույր Տիրանը, երկրի թյուրըմբռնման խմորը գնդած քերականը, իսկ Թումանյանի երկայն հասակը պտտվում է մրափած որբերի բազմության վրա. «Եվ էս ինչպե՞ս փոխեն իմ ախտավոր ոչխարը օտար գազանի հետ, որի հենց ամողջությունը մեզ համար պատուհաս է». «Դու մեր քահանան չես»:

Այս այսպես է ու կմնա այսպես, քանի դեռ բետոնը տասը կանգուն շերտով մինչև վերջին թիզը չի ծանրացել այս ցնորական երկրի կավին: Եվ ի՞նձ վրա: Եվ ձե՛զ վրա: